

1015

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ  
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ  
ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆԵՐՈՒ ԿԱՄ ԲԱՌԵՐՈՒ

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ  
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1899







Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ

---

ՊՆԿՆԱԳՆԵԼՆԵՐԻ

Գործնական Գերականութիւն

ԵՒ

ՃԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ

---

ՄԱՆԿԱԳԱՐԺԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

---

ՍՏՈՐԱԲՄԺԱՆՈՒՄ

ՄԱՍՈՒՆԻ ԲԱՆԻՆԵՐՈՒ ԿԱՄ ԲԱՌԵՐՈՒ

---

ՇՐՋԱՆ ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---



Կ. ՊՈԼԵՍ

ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱՆՍՆՅԱՆ

---

1899





ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

**Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ**

27, Ֆինանսերի Եօզուտ, Կ. Պոլիս

---

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۲۵ ربع الاخر ۳۱۶ و ۳۱ آگستوس  
۳۱۴ تاریخلی و ۴۷۱ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر



## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Նախադասութեանց վերջուծման վրայ Առաջին  
Շրջանին մեջ քառակուսի խօսուած ըլլալով՝ ներկայ  
շրջանին մեջ ուրիշ հրահանգներ կամ քացասրութիւններ  
սաշ հարկ չէ տեսնուած : Սակայն ուսուցիչներն նոյն  
վարժութիւնները կրնան շարունակել ընթերցարանին  
կամ ուրիշ յարմար աղբիւրէ մը : Եթէ քառագնկնութեան  
սկսելէ առաջ նախադասութիւն մը նախ վերջուծուի ,  
այնպէս որ հասկցուի թէ ո՛ր քառը որի՛ շրացուցիչն  
էրա՞ծ է , ուսանողը դիւրաւ պիտի ըսէ թէ ո՛ր է քառ  
ի՛նչ մասն քանի է :

Քառագնկնութեան պատճառաբանական մեթոտը (գոր  
ծիական) թէ ինչո՛ւ անուց է այս ինչ քառը , եւ այլն ,  
որ յաճախ գործածուեցաւ նախորդ շրջանին մեջ , այս  
շրջանին մեջ միայն պատահաբար կամ ըստ հարկին  
կրնայ գործածուիլ : Աւելի ծանրանալ հարկ է քառե-  
րու ստորաբաժանումներուն վրայ :

Ուսուցիչներուն կը յանձնարարուի որ Քերականու-  
թեան ներկայ շրջանին մեջ քառի մը յարաբերութիւնը ,  
գոր ունի ուրիշ քառի մը կամ քառերու հետ , նկատուի  
իբր մաս քերականական քառագնկնութեան :









ԱՇԽԱՐՀԱԲԱՐ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՇԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՐՐԵՐ



ՅԲԶԱՆ ԵՐԿՐՈՐՉ

ԲԱՌԵՐՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ



ԳԼՈՒԽ Ա.

ԱՆՈՒՆ



ԴԱՍ Ա.

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

1. Ի՞նչ է իր :

— Ո եւ է բան որուն վրայ կրնանք խորհիլ :

2. Ի՞նչ է անուն : . . . :

Գրէ .

Եփրատ գետ մըն է :

Մովսէս մարգարէ մըն էր :

Կ. Պոլիս Թուրքիոյ մայրաքաղաքն է :

3. Յիշեալ նախադասութեանց իւրաքանչիւրին

մէջ քանի՞ անուն կայ : . . . :



4. Որի՞ անուն է գէս :

— Բոլոր այն բաներուն որ գէս կ'ըսուին :

5. Որի՞ անուն է Եփրատ :

— Մասնաւոր գետի մը անունն է :

6. Որի՞ անուն է մարգարէ :

— Այն ամէն անձերուն որ մարգարէ կ'ըսուին :

7. Որի՞ անուն է Մովսէս :

— Մասնաւոր մարգարէի մը :

8. Որի՞ անուն է քաղաք : . . . : Կ. Պոլիս : . . . :

Գիտելիք. — Եփրատ, Մովսէս, Կ. Պոլիս և ուրիշ այս կարգի անուններն անհասկերու կամ մասնաւոր իրերու անուններ են :

9. Որո՞նք են մասնաւոր իրերու անուններն հետեւեալ օրինակին մէջ .

Օրինակ. — Երբ Իսրայէլ ժողովուրդը Եգիպտոսէն ելաւ եւ կարմիր ծովէն անցնելով դէպի Քանան կը ջուէր, Սին անապատին մէջ Աստուած Մովսէսի երեւցաւ եւ Սինա լեռը հանեց զանիկա :

Գիտելիք. — Մասնաւոր իրերու անունները քննութեամբ չեն վերաբերիր նոյն իրերուն, այլ տրուած են այն անհատները որոշելու միւս բոլոր իրերէն, որ նոյն դասուն կամ տեսակին կը պատկանին : Զոր օրինակ, Մովսէս անունը անհատ անձ



մը կամ մարգարէ մը կը զատէ բոլոր ուրիշ մարգարէներէն : Եւրաս անունը գետ մը կ'որոշէ միւս բոլոր գետերէն , և այլն :

Ահա այս կարգի անուններն , որ առ հասարակ ամէն նոյնատեսակ իրերու չեն արուիր , այլ անոնց միայն մէկ անհատին յատուկ են , Քերականութեան մէջ կ'ըսուին Յատուկ Անուն :

10. Ի՞նչ է յատուկ անուն :

— Յատուկ անուն կ'ըսուի այն անունը , որով իր մը կ'որոշուի բոլոր նոյնատեսակ իրերէն :

Հրահանգ 1

Ա. Ընթերցարանի դասիդ մէջ յատուկ անունները նշանակէ :

Բ. Տասը յատուկ անուններու ցանկ մը գրէ :

Կանոն. — Յատուկ անուններու սկզբնատառը գլխագիր ըլլալու է :

ԴԱՍ Բ

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ն

1. (Յոյց րաւով աշակերտ մը) Ի՞նչ է ասոր անունը :  
— (Ձոր օրինակ) Գէորգ : Ասոր անունը : — (Ձոր օրինակ) Մարիամ : Ասոր անունը : . . . : Քնու անունը : . . . :
2. Ի՞նչ կ'ըսուին այս անունները : . . . : Ինչու : . . . :



Դիտողութիւն. — Դուք ամէնքդ ձեզի յատուկ զատ զատ անուաններ ունիք իրարմէ որոշուելու համար, բայց ամէն իր միայն իրեն յատկացուած մասնաւոր անուն մը չունի: Զոր օրինակ.

3. (Բան մը, ինչպէս՝ Գրիչ մը առնելով) Ի՞նչ է այս իրին անունը:

— Գրիչ:

(Բարձեւաւ «-բէշ Գրիչ մը ցոյցնելով) Ասո՞ր անունը:

— Գրիչ: (Ուրեշ Գրիչ մը առնելով) Ասո՞ր անունը: . . . :

(Ուրեշ մը) Ասո՞ր: . . . :

Դիտողութիւն. — Կը տեսնենք թէ այս իրերը, թէև նոյն տեսակէն, իրարմէ տարբեր իրեր են էապէս, սակայն և այնպէս զատ զատ անուններ չունին: Ամենուն անունը նոյնն է — գրիչ:

4. (Առնենք «-բէշ Գրիչ մը, զոր օրինակ, Բոն-Ղե) Ի՞նչ է այս իրին անունը: — Թուղթ: (Ուրեշ Բոն-Ղե մը ալ) Ասո՞ր անունը: . . . :

(Մէշո՞ր Գրիչ մը Բոն-Ղե) Ասո՞ր: . . . : Ասո՞ր: . . . :

Ասո՞ր: . . . : Ասո՞ր: . . . :

Դիտողութիւն. — Դարձեալ կը տեսնենք թէ ուրիշ դաս մը իրեր միայն մէկ անուն ունին, որ ամենուն հասարակ է:

Գրէ.

Մարթա համեստ աղջիկ է:

Գրիգոր ազնիւ տղայ է:

Թուրքիա ընդարձակ երկիր է:



5. Ասոնց իւրաքանչիւրին մէջ ո՞րն է յատուկ անուներ : . . . :

6. Ուրիշ ո՞ր անուները կան անոնց մէջ : . . . :

7. Այդ անուները ինչո՞ւ յատուկ անուն չեն : . . . :

Գիտելիք . — Յիշեալ անուները , աղջիկ , տղայ , երկիր , անհատներու կամ մասնաւոր իրերու անուներ չեն , հասլա իրերու ամբողջ դասակարգի մը : Զոր օրինակ , աղջիկ մասնաւոր անձի մը անուն չէ , այլ առ հասարակ բոլոր աղջիկ սեռին կամ դասին անունն է : Նոյնպէս տղայ , և այլն :

Ահա այս կարգի անուներն իրերու սեռ մը կամ դաս մը կը ցուցնեն :

8. Հետեւեալ օրինակին մէջ որո՞նք են իրերու դաս մը ներկայացնող անուները .

Օրինակ . — Փողոցի խճուղիները մանր քարերով եւ աւազով կը շինուին : Նոյնպէս շատ տուներ , կամուրջներ եւ զանազան շէնքեր կը շինուին կիրով , քարով եւ աւազով , ինչպէս նաեւ փայտով ու երկաթով :

Գիտելիք . — Արդ՝ որովհետեւ աշխարհի մէջ գտնուած ամէն իրի յատուկ անուն մը տալ կարելի չէ , ուստի ընդհանուր կամ հասարակ անուն մը կու տանք բոլոր այն իրերուն , որ , նոյն սեռին կամ տեսակին պատկանելով , դաս մը կը կազմեն :



Նմանօրինակ անուններ որ հասարակ են իրերու դասի մը կամ, որ նոյնն է, նոյնատեսակ և նոյնասեռ իրերու, Քերականութեան մէջ կը կոչուին Հասարակ Անուն :

9. Ի՞նչ է Հասարակ անուն :

— Իրերու դասի մը անունը հասարակ անուն կ'ըսուի :

### Հրահանգ 2

Ա. Ընթերցարանի դասիդ մէջ հասարակ անուններ գտիր :

Բ. Հետևեալ նախադասութիւնները նախ սրբագրե (նախընթաց հրահանգին մէջ տրուած կանոնին համեմատ), յետոյ յատուկ և հասարակ անունները որոշե, մեկուն վրայ Յ. Ա. (յասուկ անուն) և միւսին վրայ Հ. Ա. (հասարակ անուն) գրելով :

1. Աստուած հնազանդութիւն կը պահանջէ ամէն մարդէ : 2. Ա. կոյս Մարիամ Յիսուս Քրիստոսի մայրն էր, իսկ եղիսարէթ անոր ազգականը եւ յովհաննէս մկրտիչի մայրն էր : 3. Թէնիսըն, մեծ բանաստեղծը, կղզիի մը մէջ բնակեցաւ : 4. լոնկֆէլլոյ անուանի բանաստեղծ մըն էր ամերիկայի պոսթօն քաղաքին մէջ ծնած : 5. արուսեակը երբեմն իրիկունը եւ երբեմն առաւօտները կ'ելլէ : 6. ծնունդը այս տարի չորեքշաբթի օր պիտի պատահի, իսկ զատիկը ապրիլին պիտի գայ եւ միշտ կիրակի օր : 7. նոյի տապանը արորատ լերան վրայ կեցաւ ջրհեղեղէն ետքը : 8. ներսէս



Ճորճալի հայոց սրբազան բանաստեղծն էր : 9. հրեշ-  
տակապետներէն մէկուն անունն է զարրիկ, իսկ միւ-  
սինը՝ միքայէլ :

## ԴԱՍ Գ

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Գրէ հետևեալ հարցումներուն պատասխան-  
ները .

1. Ո՞ր կը բնակիս :

2. Ի՞նչ է ծնողքիդ (չօրդ, մօրդ) անունը :

3. Քանի՞ տարեկան ես :

4. Ո՞ր դպրոցը կը յաճախես և ի՞նչ դաս  
կ'առնես :

5. (Ստորագրութիւնդ և գրութեանդ թուա-  
կանը դիր) :

Օրինակ . — Ես կը բնակիմ Ատաբազար, Նիկոմիդիոյ  
• գաւառին մէջ : Հօրս անունն է Կարապետ Ա. Յովսէփ-  
եան, եւ մօրս անունն է Սրբուհի : Գրեթէ 12 տարե-  
կան հասակին մէջ եմ, եւ կը յաճախեմ Օրիորդաց Վար-  
ժարանը, ուր կ'ուսանիմ Ընթերցանութիւն եւ Քերական-  
ութիւն :

Ատաբազար

ԴԱԻԹ Կ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

1/13 Մայիս 1898



# ԳՍՍ Գ

## ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Վ. ԵՐԱՅԵԱՆ, ԱՆՈՒՆ

Գրէ հետևեալ նախադասութիւնները .

Ա. Տղան հօրը մտիթարութիւնն է :

Բ. Տղայութիւնը շափահասներուն չի վայելեր :

1. Ի՞նչ աւելցած է տղային վրայ Բ. նախադասութեան մէջ . . . . .

Գիտելիք. — Գիր մը կամ վանկ մը, որ կ'աւելնայ բառի մը վրայ, տարբեր իմաստ մը տալու համար, կ'ըսուի մասնիկ :

2. Ի՞նչ է մասնիկ :

— Գիր մը կամ գիրեր, որ կ'աւելնան բառի մը վրայ, տարբեր իմաստ մը տալու համար, կ'ըսուին մասնիկ :

3. Ի՞նչ իմաստ ունի տղայութիւն :

— Կը նշանակէ տղուն յատկութիւնը, առանձին առնելով տղայ անունէն :

4. Ի՞նչ տեսակ բառ է տղայ . . . . . Տղայութիւն . . . . .

Գիտելիք. — Այս տեսակ անուններ, որ ուրիշն մասնակցով կրկին անուն կը շինուին և կը ցուցնեն



իրին յատկութիւնը, անջատ նոյն իրէն, վերաց-  
եալ Անուն կ'ըսուին :

5. Ի՞նչ է վերացեալ անուն :

— Վերացեալ անուն կ'ըսուի յատկութեան  
մը անունը՝ անգամ այն իրէն, որուն կը վերաբերի :

Գրէ .

Ա. Սպիտակ ձիւնը կը փալփայ :

Բ. Ձիւնին սպիտակութիւնը աչքը կը շացնէ :

6. Ի՞նչ մասն բանի է սպիտակ : . . . : Սպի-  
տակութիւն :

— Վերացեալ անուն է :

Գիտելիք. — Ուրեմն ածականի մը վրայ ու-  
թիւն մասնիկը աւելցնելով, կրնանք վերացեալ ա-  
նուն շինել :

7. Ածականները ի՞նչպէս վերացեալ անունի  
կը փոխես :

— Վրան ութիւն մասնիկը աւելցնելով :

8. Եթէ միայն շաքարին ֆաղցր յատկութեան  
վրայ խորհիմ, անջատ շաքար իրէն, ի՞նչպէս ըսե-  
լու եմ :

— Քաղցրութիւն :

9. Երբ կը խօսիմ կաթին ճերմակութեան  
վրայ, ո՞ր բանը կը զատեմ կաթէն :

— Ճերմակ յատկութիւնը :



10. Երբ կ'ըսեմ կաթին սպիտակութիւնը ,  
ո՞ր բանի վրայ խորհած եմ . կաթին թէ անոր  
սպիտակ յաակութեանը : . . . :

11. Ի՞նչ կը նշանակէ սեւողութիւն , շտողու-  
թիւն , և այլն :

— Գործողութիւն :

12. Ի՞նչ կը նշանակեն ծանոցում , օծում ,  
խոկում , և այլն : . . . :

13. Ի՞նչպէս կ'իմանաս այսպիսի անուններ .  
զգայարանքով թէ անոնց վրայ խորհելով : . . . :

Գիտելիք . — Ուրեմն գործողութեան անուններն  
ալ վերացեալ անուններ են :

14. Ի՞նչ է ուրեմն վերացեալ անունը ընդ-  
հանրապէս :

— Վերացեալ անուն կ'ըսուի գործողու-  
թեան մը եւ յասկութեան մը անունը՝ անցաս  
այն իրէն , որուն կը վերաբերի :

---

### Հրահանգ 3

Ա. Հետևեալ անականները և հասարակ անունները վերացեալ  
անունի փոխէ .

Օրինակ . — Բարի = Բարութիւն (իին զեղջելով) :

Մանուկ = Մանկութիւն (ուր զեղջելով) :



Բարի , ծանր , տկար , ատելի , սիրելի , վսեմ , դատող , գործող , աղքատ , հաւատարիմ , բարեկամ , գուլթ , ծառայ , կով , էջ , թշուառ , լուսաւոր :

Բ. Հետևեալ վերացեալ անունները իրենց նախնական վիճակին փոխէ :

Օրինակ . — Համեստութիւն = Համեստ :

Համեստութիւն , առաքինութիւն , մոլութիւն , հարստութիւն , խոնարհութիւն , իմաստութիւն , վսեմութիւն , հնազանդութիւն , հանգստութիւն , կարողութիւն , մթութիւն , կապկութիւն :

Գ. Հետևեալ նախադասութեանց վերացեալ անունները ստորագծէ , վրան գրելով Գ. Ա. (գործողութեան անուն), Յ. Ա. (յասկութեան անուն) :

1. Այս ճամբուն լայնութիւնը նշանաւոր է : 2. Մեր վեհ. Սուլթանին ազնուութիւնը եւ հոգածութիւնը հանրածանօթ է : 3. Քրիստոսի մարդասիրութիւնը եւ զոհողութիւնը սքանչելի է : 4. Մարդուն բարոյական անկումը խորունկ է : 5. Արեւին ծագումը փառաւոր է : 6. Դէմքին արտայայտութիւնը գրաւիչ էր : 7. Միշտ նշմարտութիւնը խօսէ : 8. Ամպերուն որոտումը սոսկալի է , իսկ թռչուններուն ճռուողումը՝ շատ հաճելի : 9. Գիրքերը կարգալու համար հարկ է լաւ ընտրողութիւն ընել : 10. Սորվելու համար անհրաժեշտ է մտածում եւ ըմբռնում : 11. Խղճին հանդարտութիւնը խաղաղութիւն կու տայ :



Հրահանգ 4

Ա. Հետևեալ նախադասութեանց մէջ գտնուած անունները  
որ դասին կը վերաբերին:

Օրինակ. — Քրիստոս ներում շնորհեց այն կնկան,  
որ չարութիւն գործած եւ բռնուած էր:

Քրիստոս յատուկ անունն է, քանզի անհատի  
անունն է:

Ներում վերացեալ անունն է, քանզի գոր-  
ծողութեան անունն է:

Կնկան հասարակ անունն է, քանզի իրերու  
դասի մը անունն է:

Չարութիւն վերացեալ անունն է, քանզի  
յատկութեան անունն է:

1. Պոսիւէ եղիպտացոց պատմութիւնը գրեց: 2.  
Երէկ լուսնի խաւարում տեղի ունեցաւ: 3. Առաքինու-  
թիւնը մարդուն պարծանք է: 4. Աստուած արդարու-  
թիւնը անվարձ չի թողուր: 5. Մեղաւորը վերջին օրը  
հատուցում պիտի ընդունի: 6. Այդ ասպրանքը ձմեռ  
ատեն սպառում չունի:

Բ. Յիշեալ անունները գրաւոր ներկայացուր:

Օրինակ

Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր

Յ Ա Տ Ո Ի Կ	Հ Ա Ս Ա Ր Ա Կ	Վ Ե Ր Ա Յ Ե Ա Լ
Քրիստոս	Կնկան	չարութիւն



Գ. Հետևեալ նախադասութեանց մէջ յատուկ անուններ գործածե՛ք :

1. Սպանիոյ երկրին թագուհին :
2. Այն երկիրը ուր կը բնակիս :
3. Մեր գաւառին իմաստուն քահանան :
4. Այն երկու գետերը որ Պարսից ծոցը կը թափին :
5. Տիեզերաց արարիչը :
6. Հայերէն Աստուածաշունչին թարգմանիչները :

Դ. Հասարակ անուններ գործածե՛ք :

Օրինակ . — Փարիզ Գաղղիոյ մայրաքաղաքն է :  
Վարդուհի , Ներսէս , Կ. Պոլիս :

### ԴԱՍ Ե

#### Հ Ա Ն Դ Է Ս Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ո Ւ

- |             |                                    |                               |
|-------------|------------------------------------|-------------------------------|
| 1. ՅԱՏՈՒԿ   | {<br>Կ. Պոլիս<br>Դամասկոս<br>Սահակ | } Մասնաւոր իրերու անուններ են |
| 2. ՀԱՍԱՐԱԿ  | {<br>տուն<br>հաց<br>մարդ           | } Իրերու դասի անուններ են     |
| 3. ՎԵՐԱՅԵԱԼ | {<br>մարդկութիւն<br>մեծութիւն      | } Յասկոչքեան անուններ են      |
|             | {<br>սարածում<br>գարգացում         |                               |

#### Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Քանի՞ տեսակ անուններ կան :
2. Ի՞նչ է մասնիկ : Մասնիկը ինքնին նշանակութիւն ունի՞ր :



3. Անուն մը կամ ածական մը ի՞նչպէս վերացեալ անունի կը փոխես :

4. Ի՞նչ է յատուկ անուն , հասարակ անուն , վերացեալ անուն :

5. Ի՞նչպէս կ'իմացուի վերացեալ անունը . զգայարան քո՞վ թէ վրան խորհելով :

6. Ի՞նչ կը ցուցնէ կով անունը : Կովու թիւն ի՞րը կը ցուցնէ թէ անոր յատկութիւնը :

7. Ի՞նչ տարբերութիւն ունին աղխս եւ աղխսու թիւն :

8. Կրնա՞մ խորհիլ եւ բառին վրայ . սասի՞կ , ֆո՞վ բառերուն վրայ :

9. Ուրեմն կրնա՞ն ենթակայ ըլլալ շաղկապը , մակբայը , յետադրութիւնը :

10. Կրնա՞մ խորհիլ շատ ածականին վրայ :

11. Կրնա՞մ խորհիլ գեղեցիկին վրայ՝ անկախ անունէն , որուն կը վերաբերի :

12. Եթէ կ'ուզեմ խորհիլ ո եւ է իրի գեղեցիկ յատկութեան վրայ , ո՞ր մասնիկը աւելցնելու եմ : Ի՞նչ անուն կ'ըլլայ այն ատեն :

13. Քարը ծանր է : Որի՞ վրայ խորհուած է :

14. Եթէ ուզես միայն ծանրին վրայ խորհիլ , նոյն յատկութիւնը բոլորովին վեր առնելով կամ անջատելով իրէն , քարէն , ի՞նչպէս կ'ըսես : Այսպէս կազմուած անունները ի՞նչ կ'ըսուին :

15. Ի՞նչ կը ցուցնեն մտածում , ծագում , եւ այլն , բառերը : Ի՞նչ կը կոչուին այսօրինակ բայի իմաստ ունեցող անունները :

16. Ի՞նչ է ընդհանուր սահմանը վերացեալ անունին :



## ԴԱՍ Զ

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. Համառօտիւ գրե ինչ որ սորվեցար անուններուն դասաւորութեան վրայ :

Բ. Գրե երեք նախադասութիւններ, որոնց մէկուն ենթական ըլլայ յատուկ անուն, միւսինը՝ հասարակ անուն և երրորդինը՝ վերացեալ անուն :

---

## ԳԼՈՒԽ Բ

### ԴԵՐԱՆՈՒՆ

## ԴԱՍ Է

### ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

1. Ի՞նչ է դերանուն : . . . :

2. Որո՞նք են դերանուն հետևեալ նախադասութեանց մէջ :

Ա. Ես կրնամ սորվիլ, եթէ դուն սորվեցնես :

Բ. Պօղոս մրցանակ առաւ, քանզի անիկա աշխատասէր է :

3. Յիշեալ դերանունները, ես, դուն, և այլն, որո՞նց տեղ դրուած են :



— Անձերու տեղ :

4. Ո՞ր անձը կրնայ ըսել իրեն համար ես :

— Խօսող անձը :

5. Ո՞ր անձը կը հասկցուի երբ կ'ըսեմ դուն :

— Այն անձը որուն կը խօսուի :

6. Երբ անիկա կ'ըսուի, ո՞ր անձը կը հասկընաս :

— Այն անձը որուն վրայ կը խօսուի :

**Դիտողութիւն.** — Կը տեսնենք թէ սոյն դերանունները յիշուած մասնաւոր յատկութիւնը ունին, որով չէ թէ միայն անձը ցոյց կու տան, այլ թէ ո՞ր անձն է, խօսողը՝ թէ ան՝ որուն կը խօսուի, կամ ան՝ որուն նկատմամբ կը խօսուի :

**Դիտելիք.** — Քերականութեան մէջ սովորաբար առաջին անձ կամ դէմք կ'ըսուի խօսող անձին, երրորդ անձ կամ դէմք կ'ըսուի անոր, որուն խօսքը կ'ուղղուի, և երրորդ անձ կամ դէմք կ'ըսուի այն անձին, որուն վրայով կը խօսուի :

7. Ի՞նչ կ'ըսուի, Քերականութեան մէջ, ես կամ այն անձը որ կը խօսի :

— Առաջին դէմքի դերանունը :

8. Ո՞րն է այն դերանունը որ ցոյց կու տայ այն անձը, որուն կը խօսուի :

— Իուն :

9. Ի՞նչ կ'ըսուի նոյն դերանունը, դուն :



— Երկրորդ դէպքի դերանունը :

10. Ո՞րն է այն դերանունը որ կը ցուցնէ ուրիշ անձ մը, որուն համար կը խօսուի : Ի՞նչ կ'ըսուի անոր :

— Անիկա : Երրորդ դէպքի դերանունը կ'ըսուի :

**Գիտողութիւն.** — Ուսանողները կրնան տեսնել թէ, առանց յիշեալ դէմքերու կամ անձերու դերանուններուն, որքան անպատշաճ պիտի ըլլար կրկնել նոյն անձերուն անունները, զորոնք կը ցուցնեն անոնք :

11. Խօսէ ընկերիդ հետ առանց ես, դուն բառերը գործածելու : . . . :

**Գիտելիք.** — Արդ՝ յիշեալ դերանունները, ես, դուն, որ առաջին դէմքը երկրորդ դէմքէն, այսինքն՝ խօսող անձը դիմացի անձէն որոշելու առանձնայատկութիւնը ունին, կը կոչուին Անձնական Դերանուն :

12. Որո՞նք են անձնական դերանունները :

— Անձնական դերանունն են ես, դուն, որ խօսողը կ'որոշեն այն անձէն, որուն կը խօսուի :



## ԴԱՍ Ը

### ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

1. Ո՞ր դէմքի դերանունն է ան կամ անհիկա : . . . :

2. Ուրեմն ո՞ր մատնաւոր բանի տեղ կը դրուի :  
— Անձի մը կամ իրի մը, որուն վրայով կը խօսուի :

Գիտողութիւն. — Երբ իրի մը վրայ կը խօսինք, ընդհանրապէս ցոյց կու տանք զայն կամ մատնանիչ կ'ընենք, որպէս թէ ըսել կ'ուզենք այն անձը, այս բանը, և այլն :

3. Երբ իրի մը վրայ կը խօսինք, ի՞նչ կ'ընենք ընդհանրապէս :

— Որպէս թէ ցոյց կու տանք զայն :

4. Երբ կ'ուզենք ցոյց տալ կամ ուշադրութիւն դարձնել ու է բանի վրայ, որ մեզի մօտ է, ի՞նչ կ'ըսենք :

— Այս, աս, եւ այլն :

5. Ի՞նչ կ'ըսենք երբ իրը խօսողէն հեռի է :

— Այդ, ասիկա, եւ այլն :

6. Ի՞նչ կ'ըսենք երբ աւելի հեռի կամ բացակայ է :

— Այն, ան, անհիկա, եւ այլն :



**Գիտելիք.** — Ան, անիկա, ինք յաճախ կը  
կոչուին երրորդ դէմքի անձնական դերանունն •  
Բայց այս դերանունները աւելի ճշգիւ կրնան  
կոչուիլ երրորդ դէմքի ծուցական Դերանուններ,  
քանզի բնութեամբ յաւէտ մատնանիշ կ'ընեն իրը,  
որուն վրայ կը խօսուի, կամ ուշադրութիւն կը  
հրաւիրեն անոր վրայ :

7. Ի՞նչ են ցուցական դերանունները •

— ծուցական դերանուններն անոնք են ու  
ցոյց կու տան իրերը, կամ ուշադրութիւն կը հրա-  
ւիրեն անոնց վրայ :

**Ծանօթութիւն.** — Երրորդ դէմքի ցուցական  
դերանուններն են •

1. Աս, այս, ասիկա, սա : 2. ԱՏ, այդ,  
ասիկա : 3. Այն, ան, անիկա • ասոնք, ասոնք,  
և այլն :

---

### Հրահանգ Ծ

Սոյն հրահանգին մեջ նշանակե անձնական և երրորդ դէմքի  
ցուցական դերանունները •

1. Մենք մեր դպրոցը գացինք, բայց անոնք հոն  
մնացին : 2. Անիկա ձիւնի պէս հալեցաւ : 3. Անիկա  
ինձի տանձ տուաւ, ու ես պիտի ուտեմ զայն : 4. Դուն  
ուշ եկար, բայց ես շուտ հասայ : 5. Ատիկա է իմ սի-  
րելի որդիս : 6. Սա ըսեմ որ չի մոռնաս, ատ իմ սիրած  
պտուղս չէ : 7. Ասիկա եղբորս տուր, անիկա շատ կը  
սիրէ նարինջ :

---



# ԴԱՍ Թ

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Աշակերտները գրեն .

Նամակ գրեցի դասընկերիս որ անմիջապէս եկաւ .

1. Ո՞վ (ըսուած է թէ) եկաւ : . . . :

2. Իմաստը կը փոխուի՞ եթէ ըսենք .

Նամակ գրեցի դասընկերիս , դասընկերս անմիջապէս եկաւ : . . . :

3. Որի տեղ դրուած է այդ բառը , որ : . . . :

4. Ուրեմն ի՞նչ կը կոչեն զայն : . . . :

5. Այս դերանունը կրնա՞ն կոչել անձնական կամ ցուցական դերանուն : . . . : Ինչո՞ւ : . . . :

6. Քանի՞ պարզ նախադասութիւն կայ վերի մեծ նախադասութեան մէջ : . . . :

Գիտելիք . — Այս դերանունը , որ , չէ թէ միայն անունի մը տեղ կը դրուի , այլ նաև իբրև շաղկապ կը կցէ կամ կը յարաբերէ նախադասութիւն մը անունի (կամ դերանունի) մը հետ , որ յիշուած է նախընթաց նախադասութեան մէջ : Ուստի կը կոչուի շաղկապական կամ , սովորաբար , Յարաբերական Դերանուն :

Եւ այն անունը (կամ դերանունը) , որուն տեղ դրուած է յարաբերականը , կ'ըսուի յարաբերականին Յարաբերեալը :



7. Ի՞նչ է յարաբերական դերանունը :

— Յարաբերական դերանունն է որ, քանզի նախընթաց անուն մը կը ներկայացնէ եւ իրարու կը կցէ երկու պարզ նախադասութիւններ :

8. Ի՞նչ է յարաբերականի մը յարաբերեալը :

— Այն բառը որ կը ներկայացուի յարաբերականով մը, կը կոչուի յարաբերեալ :

Օրինակ. — Այն անձը որ երէկ ձիէն ինկաւ, հիւանդացեր է :

9. Ո՞րն է յարաբերականը և ո՞րն է յարաբերեալը ասոր մէջ : . . . :

---

## ԴԱՍ Ժ

### Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. Նամակ գրեցի իմ բարեկամիս :

Բ. Իմ բարեկամս անմիջապէս եկաւ :

Այս երկու պարզ նախադասութիւնները կըրնանք միացնել յարաբերականի միջոցով, այսպէս .

Նամակ գրեցի իմ բարեկամիս, որ անմիջապէս եկաւ :



Հետևեալ կրկին նախադասութիւնները միա-

ցուր :

- 1. { Ա.յգ ծաղիկը խամրեցաւ :  
Ա.յգ ծաղիկը շատ կարմրագեղ եւ հոտաւէտ էր :
- 2. { Ա.յս ուսանողները պատժուեցան :  
Ա.յս ուսանողները դասերնին սորված չէին :
- 3. { Ա.յսօր տեսայ այն մարդը :  
Ա.յն մարդը քեզի նամակ բերաւ :
- 4. { Կը խոստանամ կատարել այն պատուէրը :  
Ա.յն պատուէրը վարժապետս ինձի տուած էր :

ԴԱՍ ԺԱ

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Գրէ հետևեալ նախադասութիւնները :

Ա. Ո՞վ գրած է աս գիրքը :

Բ. Ասոնցմէ ո՞րը կ'ուզէք :

Գ. Ի՞նչ կը փնտռէք հոս :

1. Յիշեալ նախադասութեանց մէջ դերանուն կան : . . . : Որո՞նք են : . . . :

2. Ո՞վ, ո՞րը, ի՞նչ. ասոնք ի՞նչ կը ցուցնեն :  
— Հարցում կը ցուցնեն :

Դիտելիք. — Ա.յս դերանունները Հարցական Դերանուն կը կոչուին :



3. Ի՞նչ է հարցական դերանունն :

— Հարցում ցուցնող դերանունները հարցական դերանունն կ'ըսուին :

4. Ի՞նչ նշան կը դրուի հարցում ցուցնող բառերուն վրայ :

— Պարոյկ կամ հարցանիշ (°) :

Հրահանգ 6

Հետևեալ նախադասութիւնները օրինակէ և հարցական դերանուններուն վրայ գրէ Հ. Դ. և յարաբերական դերանուններուն վրայ՝ Յ. Դ. և իւրաքանչիւր յարաբերական գծով մը միացուր իր յարաբերեալին հետ :

Հ. Դ.

Յ. Դ.

Օրինակ. — Ո՞րն է այն անձը որ իր ձին ինծի ծախեց :

1. Տեսայ այն մարդը որ քեզի նամակ բերաւ :
2. Ի՞նչ պատասխանեցիր անոր :
3. Այս տուներուն ո՞րն է գեղեցիկ :
4. Ծախեցի՞ք այն դործիքը որ շատ հինցած էր :
5. Ի՞նչ է քու դիրքդ դպրոցական շրջանակին մէջ :
6. Ո՞վ խմացուց ձեզի այս ուրախալի լուրը :
7. Կը խոստանամ կատարել այն պատուէրը որ հօրմէս տրուեցաւ ինծի :
8. Ես եմ քաջ հովիւը որ իր անձը ոչխարներուն համար կը դնէ :
9. Ո՞վ էր այն պարոնը որ այսօր ձեր դպրոցը այցելեց :



## ԴԱՍ ԺԲ

### ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

1. Կրնա՞ս ըսել որն է դերանունը հետևեալ նախադասութեան մէջ :

— Աւե՛նֆն ալ դպրոցն են : . . . :

2. Կրնա՞ս ըսել որի տեղ դրուած է այդ դերանունը , արե՛նֆն :

— Ոչ :

Գիտե՛լիք. — Աւե՛նֆը կամ արե՛նը կը նշանակէ ու է մէկը տարբեր իրերու , որոնցմով ամբողջութիւն մը կը կազմուի , բայց թէ ի՞նչ են այդ իրերը՝ որոշուած չեն :

Այս կարգի դերանունները Անորոշ Դերանունն կը կոչուին , քանզի անոնք ու է մասնաւոր կամ որոշ իրերու տեղ չեն դրուիր :

3. Ի՞նչ է անորոշ դերանունը :

— Այն դերանունները որ մասնաւոր կամ որոշ իրերու տեղ չեն դրուիր , կ'ըսուին անորոշ դերանունն :

Ծանօթութիւն. — Գլխաւոր անորոշ դերանուններն ասոնք են .

Աւե՛նը , մէկը , ունե՛ֆ , քանի մը , իւրաքանչիւր , միշտ , և այլն :



Հումանիտ 2

Ա. Հումանիտի գրե ինչ որ գիտես հարմարակերպ քայլ ան-  
ակնկալում կրայ:

Բ. Հումանիտի հարմարակերպ ինչ որ հարմարակերպ հարմարակերպ  
և քաղ թէ որ դասի կը հարմարակերպ և ինչ:

1. Տեսի՞ք այն ինչպիսի արդև որ հարմար է կը  
համարեն: 2. Եւ դասի անունը եւ քաղ կրկնայ թէ որ  
անհրաժեշտ կրկնայ որ արդև եւ անկախ ինչ որ հարմար  
արդև: 3. Ան որ անունին արդև կը համարայ, անհրաժեշտ  
է ինչպիսիս ինչպիսի: 4. Ինչպիսի որ անունին ինչպիսի  
ինչպիսի, անհրաժեշտ ինչ կը: 5. Այլ որ(՞) կրկնայ թէ  
քաղ դաս: 6. Ինչ որ ինչի ինչպիսիս, հարմար-  
ակնկալի կարողացի: 7. Ինչպիսիս ինչ որ(՞) որ  
հարմարակերպ կը թէ: 8. Եւ կրկնայ ինչ որ ինչի արդև  
9. Հաւ ինչ կայ որ ինչ ինչպիսիս ինչ: 10. Երկու  
ինչպիսիսին ինչ ինչի արդև, ինչպիսիս ինչ: 11. Ինչպիսիս  
ինչպիսիս ինչ անունը ինչ կարողին, անունը ինչ  
քայլ անհրաժեշտ որ հարմարակերպ եւ: 12. Ինչ ինչ կը  
ի՞նչ այն արդև համար, ի՞նչ է ան:

Հումանիտ 3

Ա. Ինչպիսիսին ինչ ինչ հարմարակերպ անուն-  
ակնկալում կր:

Բ. Ինչպիսիսին ինչ ինչ, որուն հարմարակերպ քայլ ան-  
ակնկալում կր:

(1) Անունին որ քայլ անունին ինչ որ ինչ քայլ անունին ինչ  
անունին է, ինչպիսիս հաւ ինչ որ անունին ինչպիսիսին է:

(2) Հաւ որ ինչ ինչ հարմարակերպ, ինչպիսիս է:



Գ. Երեք նախադասութիւններ շինե, որոնց մեկուն ենթական հարցական, միւսինը՝ յարաբերական և երրորդինը՝ անորոշ դերանուն ըլլայ:

Դ. Ընթերցարանիդ մեջ հինգ նախադասութիւններ գտիր, որոնց ենթակաները տարբեր դասի դերանուններ ըլլան:

## ԴԱՍ ԺԳ

### ՀԱՆԴԷՍ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ

1. ԱՆՉԵԱԿԱՆ      Ես, դու, մենք, եւ այլն. — Խօսողը կ'որոշէ անկէ՝ որուն կը խօսուի:
2. ՅՈՒՅԱԿԱՆ      Ան, անիկա, այս, այդ, եւ այլն. — Իրերը ցոյց կու տայ:
3. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ      Որ. — Անուն մը կը ներկայացնէ եւ իրարու կը կցէ նախադասութիւններ:
4. ՀԱՐՑԱԿԱՆ      Ո՞վ; Ի՞նչ, եւ այլն. — Հարցում կը ցուցնէ:
5. ԱՆՈՐՈՇ      Ամեհիք, մեկը, ոմանք, եւ այլն. — Անորոշ իրերու տեղ կը դրուին:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ի՞նչ է անձնական դերանուն: Որո՞նք են: Ի՞նչ է դէմք: Քանի՞ են:
2. Ո՞րն է ցուցական դերանունը: Ո՞ր դէմքի կը վերաբերի:



3. Ի՞նչ է յարաբերական դերանունն : Դէմքը ցուցնէ՞ : Ո՞րն է յարաբերեալը :

4. Ի՞նչ է հարցական դերանունն : Ի՞նչ կ'ըսուի հարցում ցուցնող նշանին , եւ ո՞րն է :

5. Ի՞նչ է անորոշ դերանունը : Քանի մը օրինակ տուր :



### ԳԼՈՒԽ Գ

## Բ Ա Յ

### ԴԱՍ ԺԴ

#### Է Ա Կ Ա Ն Բ Ա Յ

1. Ի՞նչ է ենթակայ և ստորոգելի (Երջան Առաջին , Դաս Է) : . . . :

2. Քանի՞ տեսակ ստորոգելի կայ (Երջան Առաջին , Դաս ԺԹ) : . . . :

3. Ի՞նչ տեսակ բառ կ'ըլլայ պարզ ստորոգելին : . . . :

4. Ի՞նչ է բայ : . . . :

5. Եթէ կ'ուզեմ ըսել թէ ենթական յատկութիւն մը ունի , զոր օրինակ , Ոսկին դեղին յասկուրթիւնը ունի ,



Կրնամ ըսել սապէս (առանց յանկուծիան  
բառը յիշելու) . Ոսկին դեղին . . . :

— Ոչ, քանզի խորհուրդ մը չի յայտնուիր :

6. Ուրեմն կատարեալ նախադասութիւն է .

. . . : Ո՞ր մասը պակաս է : . . . :

Ստորոգելի մը դնելով լրացնենք զայն .

Ոսկին դեղին է :

7. Ի՞նչ տեսակ բառ է այս ստորոգելին (է) ,

և ի՞նչ տեսակ՝ դեղին : . . . :

Գիտողութիւն . — Եթէ ուշադրութեամբ դիտենք  
սոյն նախադասութիւնը , Ոսկին դեղին է , պիտի  
տեսնենք որ այս կերպով ոսկին (ենթական) կցե-  
ցինք դեղին ածականին հետ է բայով , որու մի-  
ջոցով կը հաստատենք կամ կը ստորոգենք ենթ-  
թականին վրայ այն յատկութիւնը , որ ածականով  
կը ցուցուի :

Գիտելիք . — Այն բայը որ այս նպատակով կը  
գործածուի , գլխաւորաբար եւ՛ (1) բայն է , որուն  
զանազան ձևերն են է , եր , էին , և այլն , որոնց  
իւրաքանչիւրը կը կոչուի կապ : Քանզի որպէս թէ  
կը կապէ ենթականն ածականով ներկայացուած  
յատկութիւնը : Այսպէս .

---

(1) Էական բայէն զատ կան քանի մը ուրիշ բայեր . թուիլ , ե-  
րեւնալ , եւ այլն , որոնք իբր կապ կը պահանջեն բառ մը ստորոգելին  
կազմելու կամ ենթականն վրայ լման բան մը ըսելու համար (Դասատուն  
Թող բացատրէ) :



ԵՆԹԱԿԱՅ

ՍՏՈՐՈԳԵԼԻ

ածական

կապ

Ոսկին

դեղին

է

8. Հետևեալը լման նախադասութիւն է .

Ոսկին . . . է : . . . :

9. Ի՞նչ կը հարցնես զայն լրացնելու համար : . . . :

10. Սոյն ստորագելին , է , լման բան մը կ'ըսէ՞ ենթակային վրայ : . . . : Ուրեմն ո՞ր մասին մէջ է թերին . ենթակայի՞ն թէ ստորագելին : . . . :

11. Կրնա՞ս լրացնել հետևեալ նախադասութիւնները .

Ծաղիկը . . . է :

Յովսէփ . . . էր :

Արեգակը . . . է :

12. Սոյն կապ կոչուած բայերը լման ստորագելի ըլլալու համար ընդհանրապէս ի՞նչ տեսակ բառ կը պահանջեն : . . . :

Գիտելիք. — Այն ածականները որ այս կերպով ստորագելին մաս կը կազմեն , կը կոչուին Ստորագական Ածական : Եւ սոյն անունը կ'որոշէ ստորագելին մէջ այս կերպով գործածուած ածականները այն պարզ ածականներէն , որ անունի մը լրացուցիչներն են նախադասութեան ո եւ է մասին մէջ , առանց մաս ըլլալու ստորագելին , որ ըսուած է անոր (անունին) վրայ :



Այս վերջինները կրնանք կոչել պարզ ածականներ : Մի և նոյն ածականը կրնայ գործածուիլ իբր ստորոգական մէկ նախադասութեան մէջ, և իբր պարզ ուրիշի մը մէջ :

Օրինակ. — Այս մարդը ծեր է : (Ստորոգական)

Այս ծեր մարդը կոյր է : (Պարզ)

Գրէ .

Աստուած հոգի է :

13. Հոս կապը (է) ի՞նչ բան կապած է ենթակային հետ : . . . : Ի՞նչ բան է այն, հոգի : . . . :

Դիտարկուիւն. — Ուրեմն նոյն բայը երբեմն կ'օգնէ ենթակային վրայ բան մը ըսել՝ անոր կապելով անուն մը, կամ ուրիշ խօսքով՝ նոյն բայը լման ստորոգելի մը կազմելու համար կը պահանջէ անուն մը : Զոր օրինակ .

Նիկոմիդիա գաւառ է :

Դաւիթ մարգարէ էր :

Գիտելիք. — Այն անունները որ այս կերպով ստորոգելի մաս կը կազմեն կամ կապ կոչուած բայը կը լրացնեն, կը կոչուին Ստորոգական Անուն :

14. Ի՞նչ է կապը :

— Կապն է եւ՛ մ բայը որ բան մը կ'ըսէ իր ենթակային վրայ՝ ածական մը կամ անուն մը կցելով անոր :



Պակօթաբիւն. — Կապը, սոփոքաբար, հակասե  
բայ կը կոչուի:

15. Ի՞նչ են ստորագական անական և ստորագական անուն:

— Ստորագական անական կամ անունն այն է որ կը գործածուի կապով մը՝ կազմելու համար ստորգետիկ:

Հումանց 9

Ա. Հումանց համարաւորութիւնները գրաւոր վերջու՞՞ք ստ  
կերպով. եւրական ստորագետիկն քանի՞ք գծով մը, կապին կամ հական  
քային ներքե ներքու գիծ քարէ, և մէկ գիծ՝ ստորագական անականին  
կամ անունին ներքե:

Օրինակ. — Օղը | տաք եւ նեղիչ է:

Ոսկին | մետաղ մըն է:

1. Գրիգոր խոնարհ եւ խոհեմ է:
2. Գինեմուղութիւնը մեղք է:
3. Այդ լեռը բարձր է:
4. Ես հարուստ եմ:
5. Իր վիճակէն դո՛ւն մարդը երջանիկ է:
6. Այս կինը որբեւայրի է:
7. Այդ աղքատը անօթի է:
8. Քոյրս հիւանդ է:
9. Այն ստարակները բարեկամս է:
10. Այս երիտասարդը պանդուխտ է:
11. Մանուկը զուարթ կ'երեւի:
12. Այդ օրերդը աղջիկս է:



Բ. Բան մը ըսէ հետեւեալ ենթականերուն վրայ՝ եական բայի  
և ստորոգական ածականի կամ անունի օժանդակութեամբ:

Օրինակ. — Շուներ հաւատարիմ կենդանի է :

- |                       |                    |
|-----------------------|--------------------|
| 1. Շուներ . . . :     | 4. Ջուրը . . . :   |
| 2. Անիկա . . . :      | 5. Գարունը . . . : |
| 3. Աղքատութիւնը ... : | 6. Աշունը . . . :  |

## ԴԱՍ ԺԵ

### Ն Ե Ր Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ե Ի Չ Է Չ Ո Ւ Բ Բ Ա Յ

1. Նախադասութիւն մը առ նուազն քանի՞  
բառ կը պարունակէ խորհուրդ մը յայտնելու հա-  
մար :

— Երկու . Անուն (կամ դերանուն) եւ բայ :

2. Ի՞նչ կը կոչուի այն անունը որուն վրայ  
բան մը կը խորհուի ու կ'ըսուի : . . . :

3. Ենթակային վրայ բան մը ըսող մասը ո՞րն  
է : . . . : Ի՞նչ տեսակ բառ է ստորոգելին :

— Բայ :

4. Ո՞րն է ենթական և ո՞րն է ստորոգելին  
հետեւեալ նախադասութեանց մէջ .

Մանուկը կու լայ :

Տղան կը խաղայ :

Աղջիկը կը ննջէ :



5. Այս օրինակներուն մէջ յիշուած բայերուն միջոցով լման բան մը ըսուած է ենթականերուն վրայ :

— Այո :

Գրէ .


Ծառը . . . է :

6. Հոս միայն է բայով ամբողջ բան մը ըսուած է ենթակային վրայ : . . . :

7. Ի՞նչ աւելցնելու է այս թերի ստորոգելին ամբողջացնելու համար :

— Ածական մը կամ անուն մը :

8. Ի՞նչ կը կոչես այդ ածականը կամ անունը : . . . :

 Լրացնենք յիշեալ անկասար նախադասութիւնը :

Ծառը մեծ է :

9. Է բայը ի՞նչ բանի կը ծառայէ ասոր մէջ :

— Իբր կապ մեծ ածականը կը կցէ ենթակային :

10. Ի՞նչ բայ կը կոչուէր այդ սովորաբար : . . . :

Հիմա գրէ հետևեալ նախադասութիւնները .

Ես կը տեսնեմ . . . :

Կօչկակարը կը շինէ . . . :

11. Հոս մինակ բայերը, կը տեսնեմ, կը շինէ, իբրև ստորոգելիներ լման բաներ ըսած են :

— Ոչ :



12. Երբ կ'ըսեմ. Ես կը տեսնեմ, Հիւսը կը շիճէ, բնականաբար ի՞նչ կ'ուզեա գիտնալ: . . . : Ուրեմն նախադասութիւնը լրացնելու համար ի՞նչ ընելու է: . . . : Լրացուր, զոր օրինակ.

Ես կը տեսնեմ պարտեզ:

Կօշկակարը կը շինէ կօշիկներ:

13. Յիշեալ բայերը, կը տեսնեմ, կը շիճէ, էական բայեր են:

— Ոչ:

Գիտելիք. — Այն բայերը որ այս կերպով լրացում կը պահանջեն, գործ կը ցուցնեն և կը լրացուին բանի մը անուանով, որուն վրայ գործը կը կատարուի:

Այս կարգի բայերը կը կոչուին ներգործական Բայ, և այն՝ որուն վրայ կը կատարուի գործը և կը լրացնէ բային իմաստը, կը կոչուի ներգործական բային առարկան<sup>(1)</sup> կամ յատուկ շրացուցիչ:

14. Ի՞նչ է ներգործական բայ:

— Ներգործական բայ է այն՝ որ առանց առարկայի մը լման բան մը չըսեր:

---

(1) Մենք յատուկ շրացուցիչ կամ առարկայ անուանեցինք ինչ որ սովորաբար սեռի խնդիր կը կոչուի: Եթէ Պատ. ուսուցիչներ բանաւոր չի դատեն այս փոփոխութիւնը, կրնան պահել սովորական անունը, միայն թէ նոյն պարագային հարկ կ'ըլլայ խնդիր անունը տալ բոլոր շրացուցիչներուն:



Գիտելիք. — Իսկ այն բայերը որ լրացում չեն պահանջեր այս կերպով, կը կոչուին Չեզոք Բայ :  
Չոր օրինակ (ինչպէս վերև յիշուեցաւ) :

Մանուկը կու ըստ :

Տղան կը խաղայ :

Աղջիկը կը ննջի :

15. Ի՞նչ է չեզոք բայ :

— Չեզոք բայը այն ստորոգելին է, որ լման բան մը կ'ըսէ առանց առարկայի մը :

Գիտողութիւն. — Ուրեմն երբ ստորոգելի մը չեզոք բայ է, կրնայ լրացուցիչ չունենալ, մինչ այն ստորոգելին որ ներգործական բայ է, գէթ իր յատուկ լրացուցիչը, առարկան, կ'ուզէ՝ խորհուրդ մը յայտնելու կամ բան մը ըսելու համար<sup>(1)</sup> :

---

### Հրահանգ 10

Ա. Հետեւեալ նախադասութիւնները գրաւոր և բերանացի վերլուծէ :

Գրաւոր վերլուծութիւն. — Հաւատարիմ ուսանողը իր դասը կը սերտէ դպրոցին մէջ :

---

(1) Ուսուցիչը, եթէ հարկ դատէ, ո՞վ կամ ի՞նչ սովորական հարցումներով ներգործական եւ չեզոք բայերը որոշելու եւ ներգործականին առարկան գտնելու կերպը կրնայ բացատրել :



**Ա. Օր.** — Ուսանողը, Ենթակայ  
 Հաւատարիմ, Ածական շրացուցիչ Ենթակայի  
 Կը սերտէ, Ներգործական բայ, ստորոգելի  
 Դասը, Առարկայ ներգործական բայի  
 Իր, Ածական շրացուցիչ առարկայի  
 Դպրոցին մէջ, Յօդուածոյ (մակբայ) շրաց. ստոր.

**Բ. Օր.** — Հաւատարիմ ուսանողը | իր դասը կը սերտէ  
 դպրոցին մէջ :

**Բերանացի վերլուծութիւն.** — (Նոյն նախադասու  
 թիւերը) :

**Օրինակ.** — (Ենթական, եւ այլն, արդէն տրուած օրինակներուն պէս) կը սերտէ ստորոգելին կը պահանջէ դասը, առարկան, հաւասարիմ ածականը շրացուցիչն է ենթակային, եւ իր ու դպրոցին մէջ բառերը՝ ստորոգելիին :

1. Ծառին ճիւղերը կը շարժին :
2. Ծառը պտուղ կու տայ :
3. Կովը կը բառայէ :
4. Տղան կը սիրէ իր մայրը :
5. Այս կերակուրը շուտ կ'եփի :
6. Որսորդը թուշուն մը զարկաւ :
7. Դասատուն կը գովէ ժիր աշակերտը :
8. Մայրը կը սիրէ իր որդին :
9. Մենք կը ջրջինք պարտէզին մէջ :

**Բ.** Հետևեալ նախադասութեանց ստորոգելիները լրացուր յարմար առարկաներով :

1. Ես կը տեսնեմ . . . :
2. Մեր հաւերը կ'ածեն . . . :
3. Դպրոցականը կ'ուսանի . . . :
4. Եղբայրս տարաւ . . . :
5. Դուք այսօր գրեցիք . . . :
6. Երկրագործը դաշտին մէջ կը քաղէ . . . :
7. Քրիստոս իրեն կը կանչէ . . . :
8. Աստուած ստեղծեց . . . :
9. Մովսէս Իսրայելացիներուն տուաւ . . . :



Հրահանգ 11

Ա. Հետևեալ նախադասութեանց մէջ ներգործական և չեզոք բայերը նշանակէ Ն. Բ. և Չ. Բ. գիրերը դնելով անոնց վրայ:

1. Լուսինը կը շողայ երկնակամարին վրայ :
2. Ես կը ճանչնամ իմ ոչխարներս եւ զանոնք իրենց անունով կը կանչեմ :
3. Մարդ մը յանկարծ գետինը ինկաւ ու ոտքը կոտրեցաւ :
4. Այս երաժիշտը նուագեց այնպիսի կտոր մը որ ես զմայլեցայ :
5. Այսօր ո՞վ եկաւ հոս :
6. Նաւակը ընկղմեցաւ եւ ալիքներուն մէջ անյայտացաւ :
7. Ձիւները հալեցան , հովերը փչեցին , անձրեւները տեղացին :
8. Քու քաղցրիկ ձայնդ լսեցի եւ շատ ուրախացայ :

Բ. Հետևեալ ենթականերուն իւրաքանչիւրին վրայ աւելցուր յարմար ներգործական բայ մը և առարկայ մը, և գայն լրացուր ածականով մը կամ ուրիշ ու կ ե լրացուցիչով:

Օրինակ. — Արեւը հալեցուց լեռան վրայի բոլոր ձիւները :

1. Արեւը . . . :
2. Ճամբորդը . . . :
3. Բարեկամը . . . :
4. Բարեսիրտ տղան . . . :
5. Արուեստագէտը . . . :
6. Հայրս ու մայրս . . . :
7. Երկրագործը . . . :

ԴԱՍ ԺԶ

Կ Ր Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն Բ Ա Յ

1. Ի՞նչ է տարբերութիւնը էական բային և ներգործականին : . . . :



2. Ի՞նչ է տարբերութիւնը ստորոգական ածականին (կամ անունին) և ներգործականի առարկային : . . . :

Օրինակ. — Անդրանիկ ըսաւ . . . :

3. Մինակ այդ բայով, ըսաւ, լման բան մը ըսած կ'ըլլանք : . . . :

4. Ըսուած բանը հասկնալու համար ի՞նչ կը հարցնես բնականաբար : . . . :

5. Ի՞նչ կը կոչես տրուած պատասխանը : . . . :  
Ի՞նչ կը կոչես նոյն բայը : . . . :

Գրէ .

Ես պատժուեցայ . . . :

6. Ո՞րն է ասոր մէջ ստորոգելին (բան մը ըսող մասը) : . . . :

7. Ուրեմն պատժուեցայ ի՞նչ բառ է :  
— Բայ :

8. Մինակ այդ բայով, պատժուեցայ, լման բան մը կ'ըսենք :

— Ոչ :

9. Ըսուած խօսքը լման հասկնալու համար ի՞նչ կը հարցնես :

— Որով կամ ի՞նչ բանէ (պատժուեցայ) :

10. Կրնաս յարմար բառով մը լրացնել զայն :  
Զոր օրինակ .

Ես պատժուեցայ հօրմէս :



**Գիտելիք.** — Այս կարգի բայեր որ առանց որևէ<sup>օ</sup> կամ ի՞նչ բանի հարցման պատասխանող բառի մը լման իմաստ չեն տար, կը կոչուին կրաւորական բայ : Բանգի անոնք առարկայի մը վրայ չեն ազդեր, այլ ընդհակառակն ազդեցութիւնը կը կրեն : Ուստի կրաւորականը ուրիշ բան չէ, բայց եթէ ներգործականին հակառակ ձևը : Ինչպէս .

	կը սիրեմ	=	կը սիրուիմ
Հակադարձը՝	կը սիրուիմ	=	կը սիրեմ
	կը պատժեմ	=	կը պատժուիմ
Հակադարձը՝	կը պատժուիմ	=	կը պատժեմ

11. Ի՞նչ է կրաւորական բայ :

— Կրաւորական բայը ներգործականին հակառակ ձեւն է :

**Գիտողութիւն.** — Եթէ քով քովի դնելով դիտենք սա երկու ձևերը, զոր օրինակ .

**Ա. Ձեւ.** — Ձկնորսը բռնեց ձուկ մը :

**Բ. Ձեւ.** — Ձուկ մը բռնուեցաւ ձկնորսէն :

Կը տեսնենք թէ այս երկու նախադասութիւնները նոյն իրողութիւնը կը հաստատեն : Տարբերութիւնը միայն ձևին մէջ կը կայանայ : Եւ այս ձեւական տարբերութիւնը յառաջ եկած է սա գլխաւոր փոփոխութեամբ — ձուկ բառը, որ Ա. ձևին մէջ առարկայ է, Բ. ձևին մէջ եւնթական տեղը անցած է, և այն ատեն փոխուած է բային ձևը — բռնեց = բռնուեցաւ — և անունին (ենթական) ձևը — ձկնորսը = ձկնորսէն :



Օրինակ

Ա. 261

Բ. 261

Չկնորսը, Ենթակայ = Չկնորսեմ, Լրացուցիչ  
 Չուկ մը, Առարկայ = Չուկ մը, Ենթակայ  
 Բռնեց, Ենթ. բայ = Բռնուեցաւ, Կրար. բայ

Կամ, ուրիշ խօսքով .

Ա. ձև նախադասութիւնը կու տայ մեզի սա  
 գաղափարը թէ ,

Չկնորս Ենթակասն կը գործէ , այսինքն ,  
 բան մը կ'ընէ :

Բ. Չև նախադասութիւնը թէ ,

Չուկ Ենթակասն կը գործուի կամ կ'ըլլուի :

Այսինքն երկու ձևերուն մէջ ալ միայն առարկան ու Ենթակասն իրենց դիրքերը կը փոխեն ,  
 և բայը , ենթակային ներգործող կամ ներգործող (կրող) իմաստին համեմատ , իր ձեւը կը փոխէ<sup>(1)</sup> :

Հրահանգ 12

Ա. Հետևեալ նախադասութեանց մէջ գտիր ներգործական բայը և իր առարկան, կրաւորականը և իր բնական կամ յատուկ լրացուցիչը:

(1) Կը տեսնուի այս դիտողութենէն, որ աւելի ուսուցչին համար դրուած է բան ուսանողին, թէ կրաւորական բային այս կերպ լրացուցիչը չի կրնար իրապէս առարկայ կամ, ինչպէս կ'ըսուի սովորաբար, (բացառական) սեռի խնդիր ըլլալ, այլ պարզապէս ստորոգելին բնական կամ յատուկ լրացուցիչն է:



1. Աստուած մեղքը կ'ատէ :
2. Հաւատարիմ պաշտօնեան կը վարձատրուի իր տիրոջմէն :
3. Այս օտար մարդը տուն մը շինեց :
4. Հնազանդ աշակերտը կը սիրուի իր վարժապետէն :
5. Ես իմ ընտանիքս կը սիրեմ եւ անոնցմէ կը սիրուիմ :
6. Այս պառաւը զիս ծեծեց :
7. Հրեշտակները բարի մարդոց հոգիները երկինք կը տանին :
8. Նաւը ալիքներէն կը քշուի :
9. Ոստիկանը յաջողեցաւ բռնել գողը :
10. Այս քահանան իր ծուխերէն կը յարգուի :

Բ. Նոյն նախադասութեանց ձևերը փոխէ՝ ներգործական բայերը կրաւորականի և կրաւորականը ներգործականի դարձնելով :

**Օրինակ.** — Աստուած մեղքը կ'ատէ = Մեղքը Աստուածմէ կ'ատուի :

Գ. Տրուած նախադասութիւնները վերլուծէ սա օրինակին պէս :

**Օրինակ**

Այս պառաւը		զիս ծեծեց :
Հնազանդ աշակերտը		կը սիրուի <u>վարժապետէն</u> :

**ԴԱՍ ԺԷ**

**ԲԱՅԵՐ ՈՒ ԿԱԶՄ ՈՒԹԻՒՆԸ**

Գրէ սա բառերը .

Ծեփ եւ Լուսաւոր :

1. Ի՞նչ տեսակ բառեր են ասոնք :



— Անուն եւ ածական :

Գրէ , դարձեալ .

եւ , և ըսէ .

2. Ի՞նչ տեսակ բառ է այդ :

— Էական բայ :

Յիշեալ անունը և ածականը կցէ էական բային : Այսպէս .

Ծեփեւ , Լուսաւորեւ :

3. Ի՞նչ են այս շինուած բառերը : . . . : Ի՞նչ տեսակ բայ : . . . :

Գիտելիք . — Կազմութեամբ կամ էութեամբ բայ , գրեթէ , միայն էական բայն է : Մնացած բայերը կը շինուին , քիչ կամ շատ փոփոխութեամբ , ընդհանրապէս անունին կամ ածականին վերջը աւելցնելով եւ՛ էական բայը :

Օրինակ

Անուն	—	Քարոզ	=	Քարոզեւ
»	—	Ծախ+	=	Ծախեւ (ին զեղջելով)
»	—	Պատի-	=	Պատուեւ (իւր ուի փոխելով)
»	—	Ումպ	=	Ըմպեւ (ուր ըի փոխելով)
»	—	Տունկ	=	Տնկեւ (ուր զեղջելով)
»	—	Բոյր	=	Բուրեւ (ոյն ուի փոխելով)
»	—	Սէր	=	Սիրեւ (էն իի փոխելով)
»	—	Գիւր	=	Գրեւ (ին զեղջելով)
Ածական	—	Փառաւոր	=	Փառաւորեւ
»	—	Մաքուր	=	Մաքրեւ (ուր զեղջելով)
»	—	Սուտ	=	Ստեւ (ուր զեղջելով)



Երբեմն փոխանակ եւի, նեւ կամ անեւ կը կցուի .

Ա.ռ	=	Ա.ռ.նեւ
Մ.ռ.տ.ք	=	Մ.տ.նեւ
Հատուցում	=	Հատուցանեւ
Ծանուցում	=	Ծանուցանեւ

Երբեմն իւ, նիւ, և այլն, կցելով .

Կամք	=	Կամիւ
Բոյս	=	Բուսնիւ

Երբեմն ար, նար, և այլն, կցելով .

Ա.ն.ւ.ն, Խինդ	=	Խնդար (Չէզոք)
Ա.ն.ւ.ն, Կոյր	=	Կուրնար (Չէզոք)
Ա.ճ.ւ.հ.ւ.ն, Մեծ	=	Մեծնար (Չէզոք)

Յիշեալ մասնիկները, երբ անունի կամ ածականի վրայ աւելնալով բայը կը կազմեն, կ'ըսուին շժորդ, և լծորդելի բառերը կ'ըսուին քային արւասր :

- 4. Ի՞նչպէս կը գտնես բայի մը արմատը .
- Դուրս ձգելով բառէն լծորդը :

Հրահանգ 18

Ա. Որո՞նք են հետևեալ քայերուն արմատները, և թնջ լծորդութեամբ կազմուած են անոնք: Ըսէ նաև թե արմատները անո՞ն են թե ածական:

Աշխատասիրեմ, գովեմ, բազմապատկեմ, վարուիմ, մարմնանամ, հոգամ, խոկամ, ծաղրեմ, հիւանդանամ, մասնակցիմ, գեղեցկանամ, դադարիմ, կա-



պեմ, աւրեմ, շինեմ, մահանամ, տկարանամ, մեղմա-  
նամ, մանրեմ, փոշիանամ, գոցեմ, ծառայեմ, ծարա-  
ւիմ, անօթենամ, գինովնամ, եւ այլն :


Բ. Հետևեալ անունները կամ ածականները բայի փոխէ, և ըստ  
թի ինչ բայեր են անոնք :

Կառավար, ընտանիք, վարձք, շիտակ, սխալ,  
ուղիղ, մեծ, քայլ, հարուստ, աղքատ, անմահ, ա-  
պուր, կերակուր, գոյժ, ջուր, աւետարան, մունջ,  
ջինջ, դատ, ամպ, սուրբ, գումար, բաժանում, խօսք,  
համբոյր, մրոտ, վիրաւոր, ճերմակ, սեւ, բարձր, ա-  
ղօթք, պայծառ, լուծ, լուռ, յարգ, սոյլ, տէր, տաք,  
պաղ, ցուրտ, գին, կարգ, ծուխ, մուխ, հովիւ, անձ-  
րեւ, ձիւն, կապ, կաթ, աշխատութիւն (ուրիշն մաս-  
նիկը զեղջելով), տքնութիւն, համբերութիւն, ցոյց,  
ցնծում, կամ, ցնծութիւն, գանձ, խնդիր, մուր,   
պարգեւ, եւ այլն :

## ԴԱՍ ԺԸ

### ՀԱՆԴԷՍ ԲԱՅԵՐՈՒ

1. ԷԱԿԱՆ                    Եմ . — Ենթակային վրայ բան մը կ'ըսէ  
անոր կցելով ածական մը կամ անուն մը :
2. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ        Հսեմ, խօսիմ, եւ այլն . — Հման բան  
մը չըսեր առանց առարկայի մը :
3. ԶԷԶՈՔ                    Մեռնիմ, երթամ, եւ այլն . — Հման  
բան մը կ'ըսէ առանց առարկայի մը :
4. ԿՐԱԻՈՐԱԿԱՆ        Հսուիմ, խօսուիմ, եւ այլն . — Ներ-  
գործական բային հակառակ ձեւն է :





## Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Ի՞նչ է բայ : Ի՞նչ է էական բայ : Ուրիշ ի՞նչ անուն ունի էական բայը : Ինչո՞ւ : Ենթակայ մը եւ էական բայը նախադասութիւն կրնա՞ն կազմել : Ի՞նչ կը պահանջուի : Պահանջուած բառերուն ի՞նչ անուն կը տրուի : Ստորոգական ածական մը ի՞նչ տարբերութիւն ունի պարզ ածականէն : Կրնա՞ս օրինակ մը գտնել կամ շինել, որուն մէջ երկու մի եւ նոյն ածականներէն մէկը ստորոգական ըլլայ եւ միւսը՝ պարզ (Չոր օրինակ . Այս ծեր ճարտը ծեր շէր երբ առաջին անգամ տեսայ զին+) :

2. Ի՞նչ է ներգործական բայ : Ի՞նչ է առարկայ Քերականութեան մէջ : Ներգործական բայերը ի՞նչ կը ցուցնեն : Գործը ենթակայէն որո՞ւ կ'անցնի : Չէզոք բայն ալ գործ չի՞ ցուցներ երբեմն :

3. Ի՞նչ է չէզոք բայը ուրեմն : Ի՞նչ տարբերութիւն ունի ներգործականէն : Ստորագելի մը, եթէ չէզոք բայ է, կրնա՞յ լրացուցիչ չունենալ : Ենթակայ մը եւ չէզոք բայ մը կրնա՞ն նախադասութիւն մը կազմել : Ներգործական եւ չէզոք բայերը իրարու հետ չի շփոթելու դիւրին կերպ մը սորվա՞ծ ես (Հարցուր դասատուիդ) :

4. Ո՞ր բայերուն կրաւորական կ'ըսուի : Ներգործականին առարկան եւ կրաւորականին պահանջած լրացուցիչը նոյն ձե՞ւր ունին : Նախադասութեան մը իմաստը կը փոխուի՞ եթէ ներգործական կամ կրաւորական ձեւով ըսուի : Կրաւորականը կրնա՞յ ներգործական ձեւի փոխուիլ՝ ինչպէս որ հակադարձը կ'ըլլայ : Առարկան ինչի՞ կը փոխուի կրաւորական ձեւին մէջ :

5. Բայերուն մէջ ո՞րն է բուն բայը : Միւս բայերը, ներգործական, եւ այլն, ի՞նչպէս կը կազմուին : Ի՞նչ կ'ըսուի այսպէս կազմուած բայերուն : — Ածական բայ :



Փոխանակ եւթ երբեմն ո՞ր մասնիկներով բայեր կը շինուին : Ի՞նչ է լծորդ կամ լծորդութիւն : Ի՞նչ է բային արմատը : Բառերուն ո՞ր գիրերը կը զեղչենք բայ շինելու համար զանոնք : Ո՞ր գիրերը կը փոխուին : Ա՛յ կամ անսով մասնիկով ընդհանրապէս ո՞ր բայերը կը շինուին : — (Զէլո՛ւ, Հիւանդ = Հիւանդանալ) :



## ԴԱՍ ԺԹ

### ՇԱՐԱԴՐ ՈՒԹԻՒՒՆ

Ա. Գրէ նախադասութիւն մը, ըսելով թէ՛

1. Ի՞նչ կը տեսնես դպրոցին մէջ :
2. Ի՞նչ բաներ կը շինէ հիւանդ :
3. Ի՞նչ բերքեր կան բնակած տեղիդ մէջ :
4. Ո՞ր գիրքերը կարդացած ես :

Բ. Միացուր հետեւեալ նախադասութիւնները, որոնց բայերը նոյն են, իսկ ստորոգելիները՝ տարբեր :

#### Օրինակ

- |                              |   |                   |
|------------------------------|---|-------------------|
| 1. Յովսէփ երիտասարդ էր :     | } | Յովսէփ երիտասարդ, |
| 2. Անիկա գեղեցիկ էր :        |   | գեղեցիկ եւ        |
| 3. Անիկա առաքինի էր :        |   | առաքինի էր :      |
| 1. Մովսէս մարգարէ էր :       | } | = . . . :         |
| 2. Անիկա բարի մարդ էր :      |   |                   |
| 3. Անիկա Աստուծոյ մարդն էր : |   |                   |



Գ. Նոյն կերպով միացուր հետևեալ նախա-  
դասութիւնները :

- 1. Ես բռնեցի աղաւնի մը :
- 2. Ես բռնեցի սոխակ մը :
- 3. Ես բռնեցի կարմրալանջ մը :

} = . . . :

- 1. Ներսէս Շնորհալի գրեց Առաւօտ շուսոյն :
- 2. Ներսէս Շնորհալի գրեց Նորաստեղծեալը :
- 3. Ներսէս Շնորհալի գրեց Հաւասոյ խոսո-  
վանիւնը :
- 4. Ներսէս Շնորհալի գրեց Ընդհանրակիսանը :

} = . . . :

## ԴԱՍ Ի

### Ձ Ի Ի Ն

#### Օրինակ բառազննութեան եւ վերլուծութեան

Մենք սովորաբար կը սկսինք տրտմիլ երբ ձմեռը  
կու գայ : Եւ անշուշտ բնութիւնը տխուր պիտի ըլլար եթէ  
ամբողջ տարին ձմեռ ըլլար : Սակայն այս ամենէն ցուրտ  
եղանակը իր յատուկ գեղեցկութիւնն ունի : Եւ ան որ  
երբէք չէ դիտած ձիւնին գալը կամ չէ նայած սպիտակ  
թեթեւ սաւանով ծածկուած դաշտերուն վրայ , գրկուած  
է ամենէն սիրուն եւ հրապուրիչ տեսարաններէն մէկէն :  
Բուռն եւ թանձր ձիւնի փոթորիկի մը բռնուիլ՝ շատ ան-  
հաճոյ բան է : Սակայն անոր համար , որ առողջ է ու  
լաւ պատասպարուած , կազդուրիչ է ձիւն եկած ատեն  
դռնէն դուրս գտնուիլ , երբ ձիւնի սպտառները կ'իջնեն  
մեզմ եւ անձայն : Անոնք աննշան բաներ կը թուին ,



սակայն ժամերով շարունակ կու գան միլիոններով, մինչեւ որ երկրի ամբողջ մակերեսը, որչափ տեղ որ աչքը կրնայ տեսնել, կը ծածկուի կուտակուած ձիւնով, որ միայն փոքրիկ պատառներու կուտակում մըն է :

Ուսանողները սոյն կտորը վերջուծեն, եւ քառագնկնութեան մեջ քայտրուն համար, ինչպէս նաեւ անուններուն ու դերանուններուն համար, աղիւսակ մը շինեն հետեւեալ օրինակին պէս, եւ կարգով գրեն զանոնք :

**Օրինակ**

Ե Ա Յ Ե Ր	Է Ա Կ Ա Ն	Ն Ե Ր Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն	Զ Է Զ Ո Ք	Կ Ր Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն
	. . .	. . .	. . .	. . .



**Գ Լ Ո Ւ Խ Դ**

**Մ Ա Կ Բ Ա Յ**

**Դ Ա Ս Ի Ա**

**Մ Ա Կ Բ Ա Յ Ի Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ը**

1. Ի՞նչ է մակրայ : . . . :
2. Մակրայը նախադասութեան ո՞ր մասը կը կրայնէ :

— Պարզ ստորոգելին (բայը) :



Քու տղադ քաղաքակիրթ է : կամ ,  
Քու տղադ ազնիւ է :

3. Ի՞նչ բառեր են ասոնց մէջ փաղափակիրք ,  
ազնիւ , և որի՞ լրացուցիչներ են . ենթակայի՞ն թէ  
ստորագելիին : . . . : Ի՞նչ կը կոչուին անոնք :  
— Ստորոգական ածական :

Գիտողութիւն. — Սակայն եթէ կատարելապէս  
քաղաքակիրթ և ազնիւ չէ , այդպէս ըսել բոլոր  
բովին ուղիղ չէ : Հարկ է լրացուցիչ մը աւելցնել :  
Այսպէս .

Քու տղադ	{	հազիւ	}	քաղաքակիրթ է :
Անիկա		գրեթէ		ազնիւ է :
Կամ , Տղադ	{	յոյժ	}	քաղաքակիրթ է :
Անիկա		բաւական		ազնիւ է :
		չաս		

4. Յիշեալ հազիւ , գրեթէ , յոյժ , և այլն , բա-  
ռերը նախադասութեան մը տարրերը կը լրացնեն :  
— Ստորոգական ածականները :

5. Ի՞նչ բառեր են անոնք , հազիւ , և  
այլն : . . . :

Գիտելիք. — Կը տեսնուի որ մակբայները չէ թէ  
միայն բայերը կը լրացնեն , այլ և ստորոգական  
ածականները , ինչպէս նաև պարզ ածականները :  
Զոր օրինակ .



Բաւական զարմանալի երազ մը տեսայ :

Շատ գեղեցիկ երեւոյթ մը ունէր :

Դարձեալ գրէ .

Այս տղան ամուր կը պոռայ :

6. Ո՞րն է ասոր մէջ մակբայը : . . . :

Դիտողութիւն. — Եթէ կ'ուզենք գաղափար մը տալ թէ որ աստիճան կամ որչափ ամուր կը պոռայ, պէտք է լրացուցիչ մը աւելցնել նոյն լրացուցիչին, մակբային, վրայ :

### Օրինակ

Այս տղան  $\left\{ \begin{array}{l} \text{շատ, կամ} \\ \text{բաւական, կամ} \\ \text{յոյժ} \end{array} \right\}$  ամուր կը պոռայ :

7. Յիշեալ բառերը, շատ, և այլն, ի՞նչ բան լրացուցած են : . . . : Նախընթաց երկու օրինակներուն մէջ ի՞նչ բառեր լրացուցեր էին : . . . :

Դիտողութիւն. — Այս օրինակներէն կը տեսնուի թէ մակբայները ոչ միայն կը լրացնեն բայերը, այլ երբեմն ածականները և, նոյն իսկ, մակբայները :

8. Ուրեմն ի՞նչ է մակբային սահմանը :

— Մակբայը բառ մըն է որ կը լրացնէ ածական մը, մակբայ մը, ինչպէս, բայ մը :



Ծանօթութիւն. — Մակբայները, ինչպէս գիտենք, տեղ, ժամանակ, եղանակ, նաև հարցում, և այլն, կը ցուցնեն, և կրնան կոչուիլ, իրենց յայտնած գաղափարին համեմատ, տեղական, ժամանակական, և այլն, և այլն, զորոնք յիշել անհրաժեշտ չէ :

Հրահանգ 14

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ նշանակէ մակբայները, և ըսէ թէ ո՞ր բառը կը լրացնեն. բայր, մակբայր թէ ածականը :

1. Օղը սաստիկ ցուրտ էր :
2. Այդ գիրքը շատ սուղ է :
3. Դուք անմիջապէս քովս եկաք :
4. Քոյրս գրեթէ բաւական լաւ է :
5. Խեղճ կինը խիստ շատ նիհարցած է :
6. Այս պարոնը իր աղջկան վրայ յոյժ բարձր համարում ունի :
7. Ես անգամ մը տեսայ այդ նկարիչը :
8. Երկինքը խիստ սպայծաւ է :
9. Անիկա միշտ երջանիկ է :
10. Ես շատ մօտ եմ պարտէզին . հոն շատ բարձր ծառեր կան :

Բ. Հետևեալ կետերուն տեղ յարմար մակբայներ դիր :

1. Ուսուցիչը տեսա՞ք . . . :
2. Մեր հիւանդը . . . աղէկ է . . . :
3. Այս հանգերձը . . . կարմիր է . . . :
4. Ես բարի եւ . . . համեստ ընկեր մը ունիմ, որ . . . գիշերը քովս մնայ, քանզի մինակ . . . կը վախնայի :
5. Անիկա աղքատները . . . կ'այցելէ :
6. . . . ուրախ եմ ձեզ . . . տեսնելուս, քանզի . . . շատ կը սպասէի :



Գ. Ստորև տրուած են քանի մը պարզ ենթականեր և պարզ ստորոգելիներ: Ենթակաները լրացուր ածականներով և ստորոգելիները՝ մակբայներով կամ ո և ե կերպով, և որչափ որ կրնաս:

**Օրինակ**

Բարի	} տղան կը	} իր կարողութիւնը խոհեմութեամբ:		
Ծոյլ			} գործածէ	} իր առողջութիւնը չարաչար կերպով:
Ուշիմ				

1. . . . մարդը կը վարուի . . . : 2. . . . երկրագործը կ'աշխատի . . . : 3. . . . ուսանողը կը կարգայ . . . :

Դ. Երեք նախադասութիւններ շինէ, որոնց մեկուն մեջ մակբայը լրացնէ բայ մը, միւսին մեջ՝ ածական մը, և երրորդին մեջ՝ ուրիշ մակբայ մը:

**ԴԱՍ ԻԲ**

**ԱԾԱԿԱՆ ԵՒ ՇԱՂԿԱՊԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ**

Գրէ .

Աղուոր տղան կը խօսի :

1. Ի՞նչ տեսակ բառ է աղուոր : . . . : Որի՞ լրացուցիչն է : . . . :

Գրէ դարձեալ .

Տղան աղուոր կը խօսի :

2. Ասոր մէջ որի՞ լրացուցիչ է նոյն բառը , աղուոր : . . . :

3. Ուրեմն ո՞ր բառի դեր կատարած է հոս ածականը :

— Մակբայի :



Գիտելիք. — Այն ածականները որ մակբայի դեր կը կատարեն՝ ստորագելին լրացնելով, կրնան կոչուիլ Ածական Մակբայ :

4. Ի՞նչ է ածական-մակբայ :

— Այն ածականները որ մակբայի պատճօն կը կատարեն, կ'ըսուին ածական-մակբայ :

Գրէ դարձեալ .

Ես գիտեմ ուր կ'երթաս դուն :

5. Ո՞րն է ասոր մէջ մակբայը : . . . :

Գիտողութիւն. — Հոս ուր մակբայը, որ իբրև շողկապ իրարու հետ կը կապէ ես գիտեմ և կ'երթաս դուն պարզ նախադասութիւնները, կրնայ կոչուիլ Շողկապական Մակբայ :

6. Ի՞նչ է շողկապական մակբայ :

— Այն մակբայները որ շողկապի դեր կը կատարեն, կ'ըսուին շողկապական մակբայ :

Հրահանգ 15

Տրուած նախադասութեանց մէջ մակբայները կարգաւ գրէ ստորինակին պէս :

Օրինակ. — Յոյժ քաղցր կը խօսիս երբոր կը տկարանաս :

ՄԱԿԲԱՅ	ԲՈՒՆ ՄԱԿԲԱՅ	ԱԾԱԿԱՆ-ՄԱԿԲԱՅ	ՇԱՂԿԱՊԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ
	յոյժ	քաղցր	երբոր



1. Հաճութեամբ կ'ընկերանամ քեզի երբ պարտէզ երթաս :
2. Կ'աղաչեմ որ ըսէք ինձի ուր որ դրիք գիրքս :
3. Գեղեցիկ խօսեցար , բայց ինչո՞ւ տխուր երեւցար :
4. Անուշ կեր , անուշ խօսէ :
5. Արագ վազեցիր , անոր համար շատ յոգնեցար :
6. Ծանր ծանր մի կարգաք , ժամանակը ուշ է :
7. Վերջապէս աղջիկդ չըսաւ ինչո՞ւ այսքան գունատ էր :
8. Մեր ընտանիքը կը նստի մինչեւ կէս գիշերը անցնի :
9. Սիրտս կը յուզուէր քանի որ կ'երգէիր :

## ԴԱՍ ԻԳ

### Հ Ա Ն Դ Է Ս Մ Ա Կ Բ Ա Յ Ն Ե Ր Ո Ի

1. Բուն մակրայ — Այսօր դասս կը սերտեմ :
2. Ածական—մակրայ — Հովը անուշ կը փչէ :
3. Շաղկապական մակրայ — Կ'երթամ ուր որ կ'ուզես :

### Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

1. Մակրայը նախադասութեան ո՞ր մասը կը լրացնէ :
2. Մակրայը միայն բա՞յը կը լրացնէ : Ուրիշ ո՞ր բառերը կը լրացնէ :
3. Ի՞նչ է մակրային սահմանը :
4. Երբ ածական մը մակրայի պաշտօն կատարէ , ի՞նչ կը կոչենք զայն : Ուրեմն ո՞ր բառի դեր կը կատարէ մակրայը : Այդ պարագային մէջ ի՞նչ կ'անուանես մակրայը :
5. Երբ մակրայ մը շաղկապի դեր կը կատարէ , ի՞նչ կը կոչես զայն :



6. Այս հիւանդ մարդը շոտ ծանր կը փայտ :  
Այս նախադասութիւնը կրնա՞ս այնպէս փոխել որ ծանր  
ածական-մակրայը բուն ածականի փոխուի :

7. Մեզմ եւ հեղինկ ձայն մը զիս արքնցուց :  
Այս նախադասութեան մէջ որո՞նք են ածականները :  
կրնա՞ս փոխել զանոնք մակրայի :

## ԴԱՍ ԻԴ

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ նախադասութիւնները կրնան բաժանուակուի մէկ  
նախադասութեան մէջ. Արտօքս.

Անչառ նախա-  
դասութիւններ } Բողոմպոս իր նամբորդութենէն դարձաւ :  
Անիկա դարձաւ դէպ ի Հնդկաց երկիրը :  
Անիկա դարձաւ 1483ին :

Միացուցուած.

Բողոմպոս իր նամբորդութենէն դէպ ի Հնդկաց եր-  
կիրը դարձաւ 1483ին :

1. { Անչառ նա-  
խադասու-  
թիւններ } Մեր ուսուցիչը տուաւ մրցանակներ :  
Անիկա տուաւ զանոնք հանդէսին օրը :  
Անիկա տուաւ յառաջադէմ ուսանողներուն :

2. { Անչառ նա-  
խադասու-  
թիւններ } Ծիծեռնիկները շինեցին իրենց բոյները :  
Անոնք շինեցին դարնան եղանակին :  
Անոնք շինեցին ծառին վրայ :  
Անոնք շինեցին չոր խոտերով ու ճիւղերով :



ԳԼՈՒԽ Ե

ԱԾԱԿԱՆ

ԴԱՍ ԻԵ

ՈՐԱԿԱԿԱՆ, ԹՈՒՍԿԱՆ ԵՒ ԴԵՐՄՆՈՒՍԱՆԱԿԱՆ  
ԱԾԱԿԱՆՆԵՐ

1. Ի՞նչ է ածական : . . . : Որի՞ լրացուցիչ է : . . . :
2. Ըսէ, կամ, գրէ նախադասութիւն մը, որուն մէջ իրին յատկութիւնը ցուցնող ածական մը գտնուի :

Օրինակ. — Կարմիր վարդ մը բացուած է : . . . :

Գիտելիք. — Այս կարգի ածականները, որ իրին մէկ յատկութիւնը (կամ որակը) կը ցուցնեն, սովորաբար կ'ըսուին Որակական Ածական :

3. Որո՞նք են որակական ածականները :

— Այն ածականները որ իրին մէկ յատկութիւնը կը ցուցնեն, կը կոչուին որակական ածական :

4. Հետեւեալ նախադասութեանց մէջ որո՞նք են ածականները :



Պարտէզին մէջ շատ ծառեր կան :

Երեք մարդիկ քովս եկան , որոնց երկրորդը հիւանդ էր :

5. Յիշեալ ածականները իրին յատկութիւնը կամ որպիսութիւնը կը ցուցնեն : . . . :

Գիտելիք. — Նմանօրինակ ածականները իրերուն ոչ թէ յատկութիւնը այլ թիւը կամ որչափ ըլլալը կը ցուցնեն : Ուստի Քերականութեան մէջ կը կոչուին Թռակասն Ածակասն :

6. Ի՞նչ է թուական ածական :

— Այն ածականները որ իրին թիւը կը ցուցնեն , կ'ըսուին թռակասն ածակասն :

Ծանօթութիւն. — Թուական ածականներէն անոնք որ բացարձակապէս թիւ կը ցուցնեն , ինչպէս . մէկ , երկու , երեք , և այլն , կը կոչուին Բացարձակ Թռակասն : Ուրիշներ որ բացարձակներէն կը կազմուին , բորոյ կամ երորոյ աւելնալով անոնց վրայ , և իրերուն կարգը կամ դասը կը ցուցնեն , կը կոչուին Դասակասն Թռակասն : Զորօրինակ .

Առաջին , երկրորդ . . . Հինգերորդ , վեցերորդ , և այլն :

Գրէ հետեւեալ նախադասութիւնը .

Գեղեցիկ թռչունը այս է :

7. Ասոր մէջ ի՞նչ բառ կը կոչուի այս : . . . :

(Դաս Ը) :



8. Ո՞ր բառի դեր կատարած է հետևեալ նախադասութեան մէջ :

Այս թռչունը գեղեցիկ է :

— Ածականի :

Գրէ դարձեալ .

Ա. Սեւ կովը ինչ է :

Բ. Ի՞նչ կովս սեւ է :

9. Ա. նախադասութեան մէջ ինչ ստացական դերանունը յոր տեսակ բառի փոխուած է Բ. նախադասութեան մէջ :

— Ածականի :

Գիտելիք. — Կան ուրիշ ասոնց պէս ածականներ որ կ'ամ դերանուններէ ելած են (ինչպէս տեսանք Բ. Գլխուն մէջ) կ'ամ անոնց համիմաստ բառեր են : Ասոնց դերանուն կ'ըսենք երբ առանձին, առանց անունի մը, կը գործածուին, և ածական կ'ըսենք երբ կը գործածուին անունի մը հետ՝ զոր կը լրացնեն :

Այս կարգի ածականները կը կոչուին Դերանունական Ածական :

10. Որո՞նք են դերանունական ածականները :

— Այն դերանունները որ անունի մը հետ կը գործածուին իբր՝ ածական, կը կոչուին դերանունական ածական :



**Օրինակներ**

1. ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ. — Այս գիրքը *ֆուկդ է* .  
 ՍՏԱՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ. — Քու գիրքդ այս է :
2. ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ. — Այդ է քու խոհեմութիւնդ .  
 ՅՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ. — Այդ կարծիքը ուղիղ է :
3. ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ. — Ո՞վ եկաւ : Ի՞նչ կ'ուզէք .  
 ՀԱՐՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ. — Ո՞ր տունը: Ի՞նչ գիրք (կ'ուզէք):
4. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ. — Այն գիրքը կ'ընտրեմ որ ինծի  
 հաճելի է .  
 ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ. — Ո՛ր գիրքը կ'ուզէք զայն գնեցէք:
5. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ. — Այս տղոցմէ մէկ ֆանիկ մեզի  
 եկան .  
 ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ. — Մէկ ֆանի տղաք մեզի եկան :

**ԴԱՍ ԻԶ**

**Յ Օ Դ Ե Ր**

1. Ի՞նչպէս կ'ըսես երբ ձեր տանը սպասա-  
 ւորը գայ :  
 — Սպասաւորը եկաւ :
2. Ի՞նչ կ'ըսես եթէ ձեզի եկող սպասաւորը  
 անծանօթ մէկը ըլլայ :  
 — Սպասաւոր մը եկաւ :
3. Ի՞նչ տարբերութիւն կայ հետեւեալ նա-  
 խաղասութեանց միջև :

Հաց բեր = Հացը բեր :  
 Քահանայ մը եկաւ = Քահանան եկաւ :



Գիտելիք. — Ն գիրը թերևս այն ցուցական  
ածականին կրճատեալն է, և փոխանակ այնի՝ մի-  
այն ն (կամ յ աշխարհաբարի մէջ) կը դրուի ան-  
ուան մը վրայ: Ասկէ կը հետևի թէ յ կամ ն  
գիրը, մեր լեզուին մէջ, ցուցական ածական է  
իսկապէս: Սակայն, սովորաբար, կ'ըսուի Որոշիչ  
Յօդ:

Իսկ մը, որ թերևս գրաբար ինն ածականէն  
ելած է, նոյնպէս անորոշ ածական է, քանզի իրի  
մը անծանօթ կամ անորոշ ըլլալը կը ցուցնէ: Սա-  
կայն, սովորաբար, կը կոչուի Անորոշ Յօդ:

4. Ո՞րն է որոշիչ յօդը:

— Որոշիչ յօդ է յ կամ ն, քանզի անունին  
ծանօթ կամ որոշ ըլլալը կը ցուցնէ:

5. Ո՞րն է անորոշ յօդը:

— Անորոշ յօդ է մը, քանզի անունին ան-  
ծանօթ կամ անորոշ ըլլալը կը ցուցնէ:

Ծանօթութիւն. — Ը կամ ն կրնայ դրուիլ այն  
բառին ծայրը, որուն վրայ կրնայ դրուիլ այն. և  
մը կրնայ դրուիլ այն անունին վրայ, որուն վրայ  
այն չի կրնար դրուիլ:

---

### Հրահանգ 16

Ա. Հետևեալ նախադասութեանց մէջ այն ունեցող անունին  
վրայ յ (եթէ վերջին տառը ձայնաւոր ըլլայ՝ ն, գոր օրինակ, կատուն)   
դիր, և այն ածականը ջունեցողներուն վրայ անկցուր գայն:



1. Տեսա՞ր (այն) մարդ :
2. Վարդը խամբեցաւ :
3. Պտուղը խակ է :
4. (Այն) տղայ յամառ է :
5. (Այն) տղանի սիրուն է :
6. (Այդ) ուսուցիչ դիտուն է :
7. Վարդը բացուեցաւ :
8. Հիւանդութիւնը դարմանուեցաւ :
9. (Այն) տղայ շուկան դնաց :
10. Հիւանդը մեռաւ :
11. Հիւրը դնաց :

Բ. Հետևեալ նախադասութեանց մեջ մը անորոշ յօդ ունեցող անուններուն վրայէն վերցուր յօդը, և ջունեցողներուն վրայ աւելցուր :

### Օրինակ

Տուն փլաւ = Տուն մը փլաւ :

Մարդ մը տեսայ = Մարդ տեսայ :

1. Կառք եկաւ :
2. Ճամբորդ մը դնաց :
3. Լոյս ծագեցաւ :
4. Ծաղիկ մը բուսաւ :
5. Գիրք առի :

Գ. Սովորական սխալներ.

1. Մերին կովը սեւ է: Ըսելու է, — Մեր կովը . . . :

2. Իմին գառնուկս սիրուն է: Ըսելու է, — Իմ գառնուկս . . . :

3. Ձերին պարտէզը մեծ է: Ըսելու է, — Ձեր պարտէզը . . . :

Ար անականներուն ուղիղ գործածութիւնը.

1. Այս գրիչը իրեն տուր (բային վրայ) :

2. Իրենց փայտը վառեցաւ, մերինը (մեր փայտը) մնաց (անունը զեղջուած) :

3. Իրեն հասնար կը վաստկի (յետադրութեամբ) :

Դ. Հետևեալ նախադասութեանց մեջ կրկնուած անունները փոքեղով գրէ.

Օրինակ. — Մեր տղան ուշիմ է ձեր տղայէն =

Մեր տղան ուշիմ է ձերինէն :



1. Քու տունդ հաստատուն է մեր տունէն = . . . :
2. Իմ ոտքս խոշոր է քու ոտքէդ = . . . :
3. Իմ աչքս սուր է քան քու աչքդ = . . . :
4. Իմ ձիս զօրաւոր է, իսկ քու ձիդ՝ տկար = . . . :
5. Քու ստակդ շատ է, իմ ստակս՝ քիչ = . . . :
6. Քու սէրդ պաղ է իմ սէրէս = . . . :
7. Իմ աչակերտս արթուն է ձեր աչակերտէն = . . . :
8. Մեր ոչխարները մեռան, ձեր ոչխարները մնացին = . . . :
9. Մեր եզին աչքը կուրցաւ, իր կովին աչքը բուժուեցաւ = . . . :
10. Մեր տանը դուռը երկաթ է, ձեր տանը դուռը փայտ է = . . . :

Հրահանգ 17

Ա. Հետևեալ օրինակին պէս ցուցակ մը շինե. և կարգաւ գրե՛ ածականները:

ԱԾԱԿԱՆՆԵՐ

ՈՐԱԿ.	ԹՈՒԱԿԱՆ		ՅՕԴ.		ԴԵՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ				
	ԲԱՅ.	ԴԱՍ.	ՈՐՈՇ.	ԱՆՈՐՈՇ	ՍՏԱՅ.	ՅՈՒՅ.	ՀԱՐՅ.	ՅԱՐ.	ԱՆՈՐՈՇ
...	...	...	...	...	...	...	...	...	...
...	...	...	...	...	...	...	...	...	...

1. Այդ ազնիւ տղան ձերունի մարդուն օգնեց, որ ծանր բեռ մը ունէր իր կռնակին վրայ: 2. Առտուան



առաջին ճառագայթները եւ զով զեփիւսը մեզ արթըն-  
ցուցին մեր խորունկ քունէն : 3. Ո եւ է ուտելիք ու-  
նի՞ք . քիչ մը ունիմ : 4. Երեք կամ չորս պատկերներ  
ունէի , որոնց երկրորդը դասատուս տուաւ , վերջինը ա-  
մենէն գեղեցիկ պատկերն է : 5. Այդ ուսանողները մըր-  
ցանակ ընդունեցին , որոնք ամէնը հաւասար թիւ առած  
էին : 6. Իւրաքանչիւր տղայ իր կարողութեանը չափով  
օգնելու է իր ծնողքին : 7. Հոս երկու նստարան կայ .  
մէկը քուկդ է , իսկ միւս նստարանը մերն է : 8. Անոր  
բոլոր աղջիկներն ալ բարի էին , բայց ամէնն ալ մեռան :  
9. Ի՞նչ բան կը պահանջես ինծմէ : 10. Ո՞ր տուն կը  
փնտռես . ասոնց ո՞րն է քու փնտռածդ : 11. Ո՞վ են  
այս պարոնները որ կը չըջին : 12. Այս նաւը շատ ա-  
րագընթաց է : 13. Մարդ մը տեսայ որ թեւ մը միայն  
ունէր :

Բ. Հետեւեալ նախադասութիւնները այնպէս փոխէ որ դեր-  
անուանական ածականները դերանուն ըլլան , և դերանունները՝ ածա-  
կան : Ըսէ նաև թէ ո՞ր տեսակ ածական կամ դերանուն են անոնք :

### Օրինակ

1. Ո՞ր տղան ուշիմ է = Այն տղան որ ուշիմ է :
2. Ի՞նչ տեսնելու եկար = Ի՞նչ բան ունիս հոս :
3. Այս գիրքը իմս է = Իմ գիրքս այս է :

1. Իմ տունս շատ գեղեցիկ է , սակայն քուկդ շատ  
փոքր է : 2. Այս գրիչը կոտրած է . ատիկա (կամ ատ)  
իմս չէ : 3. Որո՞ւ տուիք իմ զմելիս : 4. Վարժապետը  
ի՞նչ համարում ունի մեր վրայ : 5. Ո՞ր դասատուն շատ  
կը սիրէք . ա՞յս թէ այն : 6. Այս վարդապետն էր , որ  
երէկ պատարագ ըրաւ : 7. Քանի մը օտարականներ տե-  
սայ , որ ձիով կը չըջէին : 8. Անոնցմէ մէկ քանին վա-



ճառական են, ումանք ալ՝ արհեստաւոր : 9. Այս աշա-  
կերտները կը խաղան, իսկ միւսները կը կարդան ու կը  
գրեն : 10. Իմ տունս քուկդ է, քուկդ ալ իմս է :

## ԴԱՍ Ի՛Է

### Հ Ա Ն Դ Է Ս Ա Ծ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ո Ի

1. ՈՐԱԿԱԿԱՆ	Յատկութիւն ցուցնող	Սեւ մելան, մաքուր ձեռք
2. ԹՈՒԱԿԱՆ	{ 1. Բացարձակ 2. Դասական	Հինգ հոգի Հինգերորդ անձը
3. ԴԵՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ	{ 1. Ստացական 2. Ցուցական 3. Հարցական 4. Յարաբերական 5. Անորոշ	Իմ տունս, ձեր գիրքը Այն քաղաքը Ո՞ր տունը, ի՞նչ խօսք Միշտ աշակերտը
4. ՅՕԴ	{ 1. Որոշիչ 2. Անորոշ	Ը, ն. — Սէրը, հոգին Մը, մըն. — Մարդ մը, ձայն մըն է

### Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Ըսէ ածականներու ստորաբաժանումը (քանի՞ տեսակ ածական կայ) :
2. Ո՞ր ածականը որակական կ'ըսուի . ո՞րը՝ թուա-  
կան : Քանի՞ տեսակ թուական ածական կայ : Բացար-  
ձակին վրայ ի՞նչ մասնիկ աւելցնելով դասական կը շի-  
նես : Երբ կ'ըսեմ Տասներորդ, քանի՞ հատ առնուած է  
տասնին մէջէն . քանի՞ հատ՝ երբ կ'ըսեմ հարիւրերորդ :  
Քանի՞ գլուխ պիտի կարդամ երբ կ'ըսեմ քսաներորդ  
գլուխը . . . .



3. Որո՞նք են դերանուանական անձանիները Քա-  
նի՞ հատ են : Ի՞նչ ատեն զուտ դերանուն են, եւ ի՞նչ ատ-  
տեն՝ անձան : Ի՞նչ պարագայի մէջ իմ գործածելու  
ենք, եւ ի՞նչ պարագայի մէջ իմին : Ե՞րբ կ'ըսես ձեր,  
եւ ե՞րբ՝ ձերին :

4. Ի՞նչ է յօդ : Քանի՞ տեսակ է : Յօդը եւ այնք  
միասին կրնա՞ն գործածուիլ : Առանց անորոշ յօդի կրնա՞յ  
գործածուիլ բառ մը : Զոր օրինակ .

Տուն մը կամ տուն փլաւ :

## ԴԱՍ ԻԸ

### ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌ — ՄԱԿԲԱՅԻ ԿԱԶՄ ՈՒԹԻԻՆԸ

Գրէ .

Հանդարտ կերպով գիրքը կարդաց :

1. Ի՞նչ կերպով կարդաց : . . . :

2. Ի՞նչ բառի ոյժ ունին յիշեալ զոյգ բա-  
ռերը, հանդարտ կերպով :

— Մակբայի :

3. Ի՞նչ կը կոչուէին անոնք :

— Յօդուածոյ մակբայ :

4. Յիշեալ նախադասութեան իմաստը կը  
փոխուի՞ եթէ յօդուածոյ մակբային ձեր փոխենք  
աւելի կարճելու համար զայն : Զոր օրինակ .

Հանդարտաբար վարուեցաւ :

— Այ :



5. Ի՞նչ են այս կերպով կազմուած բառերը,  
հանդարտաբար, խորապէս :

— Մակբայ :

6. Ի՞նչ տեսակ բառեր են հանդարտ, խոր :

— Ածական :

7. Ի՞նչ աւելցուցիր մակբայի փոխելու հա-  
մար զանոնք :

— Պէս, բար :

8. Ի՞նչ կը կոչուին ատոնք :

— Մասնիկ :

9. Ուրեմն ի՞նչ մասնիկով շատ անգամ կրնաս  
բառ մը մակբայի փոխել : . . . :

Գիտելիք. — Պէս և բար մասնիկներէն զատ  
օրէն (մարդկօրէն), գին (սրտագին) և ուրիշ մաս-  
նիկներով ածական մը կամ անուն մը կրնայ մակ-  
բայի փոխուիլ : Այսպէս կազմուած բառերը կը  
կոչուին Ածանցեալ Բառ, և վրան աւելցած մաս-  
նիկը կ'ըսուի Ածանցական Մասնիկ :

10. Ի՞նչ է ածանցական մասնիկ :

— Գիր մը կամ վանկ մը, որ կ'աւելնայ բա-  
ռին վրայ՝ արբեր իմաստ մը տալու համար, կը  
կոչուի ածանցական մասնիկ :

11. Ի՞նչ է ածանցեալ բառ :

— Ածանցեալ բառն է այն որ մասնիկ մը  
առնելով վրան, արբեր իմաստ մը կու տայ :



Հրահանգ 18

Ա. Հետևեալ բառերու բառերը մակբայներու փոխէ:

1. Պետրոս դասն կերպով լացաւ :
2. Սարգիս եկաւ եւ ծանր կերպով վիրաւորուեցաւ :
3. Այս մարդը կոյրի պէս կը քայլէ :
4. Գեարդ յասն կերպով կ'ընթանայ :
5. Անյազ կերպով կ'ուտես :
6. Վարժապետէս ասուաս կերպով կը վարձատրուիմ :
7. Տրտում եղանակով կ'երգէ , լալու պէս կը հեծէ :

Բ. Հետևեալ անանգական մակբայները անականներու կամ արմատ<sup>(1)</sup> բառերու փոխէ:

Տխրագին , սրտագին , լռիկ , կամացուկ , մեղմիկ ,  
 հեշտագին , ճոխաբար , սովորաբար , մեծապէս , նուաստաբար ,  
 յատկապէս , ընդհանրապէս , աշխարհօրէն ,  
 մեղկօրէն , ծուլաբար :

ԴԱՍ ԻԹ

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

ԱԾԱՆՑԵԱԼ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Գրէ .

- Ա. Արժաթէ շինուած գաւաթով կը խմէր :
- Բ. Բարի սիրտ ունեցող մայր մըն էր :

---

(1) Այն բառերը որոնց ոչ սկիզբը եւ ոչ վերջը գիր կամ վանկ աւելցած է, կ'ըսուին արմատ:



1. Ի՞նչ պիտի գաւաթով կը խմէր : . . . : Ի՞նչ պիտի մայր էր : . . . :

2. Ո՞ր բառի ոյժ ունին անոնք :  
— Ածականի :

3. Ի՞նչ կը կոչուէին անոնք : . . . :

4. Նախադասութիւններուն ոյժը կը փոխուի եթէ, նոյն բառերը միացնելով, անոնց ձևը փոխենք՝ աւելի կարճելու համար : Զոր օրինակ .

Արծաթեղէն գաւաթով կը խմէր :

Բարեւիրտ մայր մըն էր :

— Ոչ :

5. Ի՞նչ են այս կերպով կազմուած բառերը, արծաթեղէն, բարեւիրտ :

— Ածական :

6. Ի՞նչ տեսակ բառ է արծաթ :

— Անուն :

7. Ի՞նչ աւելցուցիր անոր վրայ՝ ածականի փոխելու համար : . . . :

8. Ի՞նչ կը կոչուի աւելցած վանկը, եղէն : . . . : Ի՞նչ կը կոչուի նոյն մասնիկով կազմուած ածականը : . . . :

9. Ի՞նչ տեսակ բառ է բարեւիրտ : . . . :

10. Յիշեալ բառը, բարեւիրտ, ո՞ր երկու բառերով կազմուած է : . . . :

11. Ի՞նչ կը կոչուին յիշեալ բառերը, բարի և սիրտ, իրենց նախնական վիճակին մէջ :



— Արմատ բառեր :

Գիտելիք. — Երբ երկու արմատ բառեր գրով մը, կամ առանց գրի, բառ մը կը կազմեն, կ'ըսուին Բարդ Բառ :

12. Ի՞նչ է բարդ բառ :

— Երկու բառեր որ իրարու կցուելով բառ մը կը կազմեն, կ'ըսուին բարդ բառ :

Հրահանգ 19

Ա. Հետևեալ նախադասութիւնները ածանցեալ բառերու փոխե սա նախադաս մասնիկներով, *ան, ապ, ս, դժ* :

Օրինակ

1. Առանց խելքի տղայ = Անխելք տղայ :
2. Երախտիք ճանչցող մարդ = Ապերախտ մարդ :
3. Գիտութիւն չունեցող տղայ = Տգէտ տղայ :
4. Գոհ չեղող տղայ = Իժգոհ տղայ :

1. Առանց մտքի եւ առանց կրթութեան տղան :
2. Գեղեցիկ չեղող դէմք :
3. Սկզբունք չունեցող զաւակ :
4. Յոյս չունեցող հիւանդ :
5. Բաղդ չունեցող մանուկ :

Բ. Հետևեալ նախադասութիւնները ածանցեալ բառերու փոխե սա յետադաս մասնիկներով, *ական, ային, առոր* :

Օրինակ. — Քաղաքի վերաբերեալ խնդիր = Քաղաքական (կամ ային) խնդիր :

1. Ծովու վերաբերեալ գործ :
2. Առողջութեան յատուկ վիճակ :
3. Պատիժի վերաբերեալ օրէնք :
4. Վանքի վերաբերեալ կանոն :
5. Հողի վերաբերեալ քա-



րող : 6. Կրօնքի վերաբերեալ ժողով : 7. Գրով եղած դաս : 8. Գոյն ունեցող պատկեր (ոյն ուրի փոխէ) : 9. Թոյն ունեցող օձ : 10. Մեղք ունեցող մարդ : 11. Վէրք, պատիւ , փառք , սուգ , նշան ունեցող բաներ :

Գ. Հետևեալ բառերը առան կամ անոց մասնիկով շինե :

Կրակի , որբի , գործի , աղքատի , ծերի , յիմարի , արուեստի , կրթութեան , վարժութեան , մանուկներու տեղ :

Դ. Հետևեալ բառերը յօդուածոյ ածականներու վերածե :

Օրինակ. — Անչափ (սէր) = Չափ չունեցող (սէր) :

Անկարող (պատանի) , անամօթ , ապաշնորհ , բաղդաւոր , տկար , անառակ , անհուն , անճառելի , վտանգաւոր , ամարանոց , անկեղանոց , ուսումնարան , մանկական , գազանային , կարեւոր , անուանի , հոգեւոր , զօրաւոր , զօրեղ , կանայցի , ընտանեկան , մարդկային , եւ այլն :

---

### Հրահանգ 20

Ա. Հետևեալ նախադասութեանց մեջ բարդ բառերը որոշե :

1. Մեծահաւատ մարդը երջանիկ կ'ըլլայ : 2. Առատասիրտ անձը վարձքի արժանի է : 3. Քաղցրածայն երգերը գրաւիչ են : 4. Թանձրամիտ տղան չի սորվիր : 5. Արագընթաց ձին շուտով կը հասնի : 6. Աստուած պարգեւատու է : 7. Դատաւորը արդարասէր է : 8. Յանցապարտ մարդը կը դատապարտուի : 9. Մարդասպանը կը կախուի :



Բ. Հետևեալ խօսքերը բարդ բառերու վերածե:

Փառք սիրող, մեծ տուն, գանձի պետ, վանքի հայր, նամակի տուն, դէմքը գեղեցիկ, հաւատքը թերի, զօրութիւնը մեծ, ծնողքը սիրող, քուն բերող, ծերերու կոյտ, սիրտը բարի, խրատ տուող, ջուր հանող, պերճ խօսող, սովով մեռած, սուտով յօգուած, ուխտի գացող, ուխտը զանց ընող, դաշնակ, քնար, նուագ զարնող, գարշելի հոտ ունեցող, սիրով սնած, դէկ վարող, բաղդ խնդրող, արագ թռչող, արագ շարժող, շոգիով նաւ, երկաթէ ճամբայ (ուղի), փայտէ շինուած, կանխաւ գուշակուած, պինդ գլուխ ունեցող, պարի գլուխ, գրքի տուն, գրքի դարան, ծովի եզերք, կառքի խումբ, պատմութիւն գիտցող, մարդ սիրող, փոխ տուող, սեղանի տուն, ննջելու սենեակ, գարիի ջուր, խաչի փայտ:

## ԴԱՍ Լ

### Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Հետևեալ պարզ նախադասութիւնները միացնելով մեկ նախադասութեան վերածե:

Օրինակ. — Պարզ նախադասութիւններ .

Ծառը չորցաւ :

Անիկա կաղնիի ծառ մըն էր :

Անիկա հիմաւուրց ծառ մըն էր :

Անիկա հաստ ծառ մըն էր :

Անիկա կը գտնուէր անտառին մէջ :

Փայլակը զարկաւ զանիկա :

Գիշեր էր երբ փայլակը զարկաւ զանիկա :

Օրը Կիրակի էր :

Ժամը 6 էր երբ փայլակը զարկաւ զանիկա :



Մեկ նախադասութեան մեջ բովանդակուած.

Անտառին մէջ գտնուած հինաւուրց , հաստ կաղ-  
նիի ծառը կիրակի գիշեր , ժամը Յին , փայլակէն զար-  
նուելով չորցաւ :

1. Մանուկը ինկաւ : Անիկա փոքրիկ էր : Անիկա  
հորին մէջ ինկաւ : Հորը չոր էր : Անիկա այս առաւօտ  
ինկաւ :

2. Տղայ մը եկաւ : Անիկա փոքր էր : Անիկա գե-  
ղեցիկ էր : Անիկա սեւ աչքեր ունէր : Անիկա կարմիր  
երեսներ ունէր : Անիկա իր մօրը եկաւ : Անիկա թռչուն  
մը ունէր : Անիկա դեղին էր : Անիկա անուշիկ կ'երգէր :

3. Միլթըն ծնած է : Անիկա բանաստեղծ մըն էր :  
Անիկա մեծ բանաստեղծ մըն էր : Անիկա Անգղիացի էր :  
Անիկա ծնած է Լոնտոն : Անիկա ծնած է 1608ին :

4. Ուսանողը գրեց : Անիկա բարի տղայ էր : Անի-  
կա նամակ մը գրեց : Անիկա գրեց իր մօրը : Անիկա  
գրեց դպրոցէն : Անիկա գրեց իր ծննդեան օրը : Անիկա  
գրեց Յուլիս 18ին : Անիկա գրեց 1898ին :

---

## ԳԼՈՒԽ Զ

# ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՒՆ

## ԴԱՍ ԼԱ

1. Ի՞նչ է յետադրութիւն , . . . :

2. Յետադրութիւնը ո՞ր ծայրը կը դրուի ա-  
նունին՝ (կամ գերանունին) զայն ուրիշ բառի մը  
կցելու համար : . . . :



3. Ո՞ւր դրուած է հետևեալ նախադասու-  
թեան մէջ :

Դէպ ի տուն կը վազեմ : . . . :

Դիտողութիւն. — Յետադրութիւններէն ոմանք  
անուններուն սկիզբը կը դրուին :

4. Ի՞նչ կը նշանակէ տուն կ'երթամ : . . . :

5. Ի՞նչ զեղչուած է անոր մէջ : . . . : Ամ-  
բողջացուր :

— Դէպ ի տուն կ'երթամ :

6. Ի՞նչ զեղչուած է հետևեալ նախադասու-  
թեան մէջ : Լրացուր զայն :

Աղջիկս դպրոցն է :

— Աղջիկս դպրոցին մէջ է :

7. Դպրոցը կամ դպրոցին մէջ (է) նախա-  
դասութեան ո՞ր մասին լրացուցիչն է : . . . : Որք  
հետ կցուած է դպրոցը : . . . :

8. Ի՞նչ կը կոչուի լրացուցիչը, դպրոցին մէջ :  
— Յօդուածոյ լրացուցիչ :

9. Ո՞ր տեսակ լրացուցիչի ոյժ ունի :

— Մակբայի :

10. Ինչո՞ւ<sup>(1)</sup> : . . . :



(1) Դասատուն հոս ըսուածները կրնայ ընդարձակել, կամ, արդէն  
ըսուածները ուսանողին յիշեցնել :



ԳԼՈՒԽ Է

ՇԱՂԿԱՊ

ԴԱՍ ԼԲ

ՇԱՂԿԱՊՆԵՐՈՒՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

1. Երբ մէկ խորհուրդ ունինք բացատրելու կամ մէկ բան ունինք ըսելու, քանի՞ նախադասութիւն կը կազմենք : . . . :

2. Այս կարգի նախադասութիւն մը քանի՞ ենթակայ և քանի՞ ստորոգելի կ'ունենայ : . . . :

3. Ի՞նչ անուն կը տրուի այսպիսի նախադասութեան մը :

— Պարզ նախադասութիւն :

Դիտողութիւն. — Սակայն, ինչպէս գիտենք, խօսքի ընթացքին մէջ շատ անգամ երկու կամ աւելի խորհուրդներ կ'ունենանք, զորոնք իրարու կապակցելով կ'արտայայտենք : Զոր օրինակ .

Արեւը ծագեցաւ եւ օդը պայծառացաւ :

4. Հոս քանի՞ պարզ նախադասութիւն կայ : . . . : Իւրաքանչիւրը քանի՞ ենթակայ կամ ստորոգելի ունի : . . . :



5. Նոյն նախադասութեան մէջ յայտնուած երկու խորհուրդները, կամ երկու պարզ նախադասութիւնները, իրարու կցող բառը ո՞րն է :  
... : Ի՞նչ կը կոչուի : ... :

**Գիտողութիւն.** — Այս բառերը, շաղկապները, խօսքի կազմութեան մէջ միայն կցելու պաշտօն չունին : Աւելին կ'ընեն : Եթէ խնամով դիտենք, կը տեսնենք թէ շաղկապները յաճախ իրարու կապակցուած նախադասութեանց միջոցով՝ յայտնուած խորհուրդներուն թնուրթիւնը կը ցուցնեն : Զոր օրինակ .

Եթէ ուզենք ցուցնել թէ արևը ելլելուն հետևանքն է ի՞նչ եղաւ, կը գործածենք հետևեալ շաղկապը :

Արեւը ելաւ, ուստի ամպերը փարատեցան :

6. Ուրեմն ի՞նչ կը ցուցնէ յիշեալ շաղկապը, ուստի :

— Հետեւութիւն :

**Գիտելիք.** — Ուստի այս կարգի շաղկապներուն եթէ ուզենք անուն մը տալ, կրնանք կոչել զանոնք հետևական շաղկապ :

**Գիտողութիւն.** — Դարձեալ, եթէ յայտնուած խորհուրդ մը միւսին պատճառը ցոյց տայ, կը գործածուի ուրիշ շաղկապ մը :

Բժիշկը մեր տունը եկաւ, քանզի մայրս հիւանդ է :



7. Ի՞նչ կը ցուցնէ յիշեալ շաղկապը, քանզի  
— Պատճառ :

Գիտելիք. — Այսօրինակ շաղկապները, եթէ  
ուզենք որոշել ուրիշներէն, կրնանք անուանել  
պատճառական շաղկապ :

Գիտողութիւն. — Վերջապէս, եթէ ուզենք  
ցուցնել թէ երկրորդ խորհուրդ մը հակառակը  
կը հաստատէ առաջինին, զանոնք ուրիշ շաղկա-  
պով մը կը կցենք : Զոր օրինակ .

Արրահամ դպրոց կ'երթայ	$\left. \begin{array}{l} \text{(բայց} \\ \text{սակայն} \\ \text{այլ} \\ \text{սակաւին)} \end{array} \right\}$	չի կրնար սորվիլ :

8. Ի՞նչ կը ցուցնեն յիշեալ շաղկապները, և  
ի՞նչ կրնան կոչուիլ<sup>(1)</sup> :  
— Հակադրական :

## ԴԱՍ ԼԳ

### ՇԱՂԿԱՊԻՆ ՍԱՀՄԱՆԸ

1. Շաղկապները միայն նախադասութիւններ  
կը կապեն իրարու : . . . : Ուրիշ ի՞նչ կը կապեն : . . . :

(1) Այս անունները յիշուած են միայն ցոյց տալու համար շաղ-  
կապներուն բնութիւնը, զոր ուսուցիչը դիտել պիտի տայ ուսանողնե-  
րուն, առանց գոց ընել տալու զանոնք իբր շաղկապին ստորաբաժա-  
նումները :



2. Ի՞նչ տեսակ բառեր կապուած են հետևեալ նախադասութեան մէջ :

Ա. դ. քատ՝ բայց համեստ ծնողք ունիմ :

— Ա. ծականներ :

3. Ո՞ր տեսակ բառեր կապուած են հետևեալ նախադասութեան մէջ :

Ծառերը պարտէզին մէջ եւ շուրջը տնկուած են :

— Յետադրու թիւներ :

4. Ո՞ր տեսակ բառեր՝ հետևեալ նախադասութեան մէջ :

Տղան ու աղջիկը եկան :

— Ա. նուն ենթականեր :

5. Որո՞նք՝ հետևեալ նախադասութեան մէջ :

Մենք ու դուք ներկայ եղանք : . . . :

6. Որո՞նք՝ հետևեալ նախադասութեան մէջ :

Վարդը կամ շուշանը շատ կը սիրեմ :

— Ա. նուն առարկաներ :

7. Վերջապէս, որո՞նք կապուած են հետևեալ նախադասութեանց մէջ :

Ես ու քոյրս կը գովենք քեզ եւ քու ընկերդ :

Զուրը կ'եռայ ու կը շոգիանայ :

Տեսուչը խստիւ՝ սակայն լռիկ կը կառավարէ դպրոցը : . . . :



**Գիտողութիւն.** — Այս օրինակները քննելով կը տեսնենք թէ շաղկապով կապուած բառերը միշտ նոյն կերպով կը գործածուին նախադասութեան մէջ, և անոնք նոյն մասունքի բանիներն են (բացի անունէն և դերանունէն) նախադասութեան մի և նոյն մասին մէջ, որոնք, նաև, մի և նոյն բառին կը վերաբերին :

**Գիտելիք.** — Սոյն դիտողութեան վրայ հիմնուելով, սապէս կը սահմանենք շաղկապը :

Շաղկապը բառ մըն է որ իրարու կը միացնէ նախադասութիւններ, կամ բառեր, որոնք նախադասութեան մէջ մի և նոյն կերպով գործածուած են :

8. Ի՞նչ է շաղկապ :

— Շաղկապը բառ մըն է որ իրարու կը միացնէ նախադասութիւններ, եւ այն բառերը, որոնք նախադասութեան մէջ մի եւ նոյն կերպով գործածուած են :

9. Կրնա՞նք ըսել թէ ի՞նչ է տարբերութիւնը շաղկապին և յետադրութեան, կրկնելով նախապէս յետադրութեան սահմանը, զոր տուիր նախընթաց գլուխին մէջ<sup>(1)</sup> : . . . :

---

(1) Այս հարցումը կարելոր է, քանզի ուսանողը տրուած բացատրութիւններէն ըմբռնած է թէ յետադրութեան եւ շաղկապին գործը նոյնն է, կցել: Ուստի շատ անգամ կրնայ շփոթել զանոնք իրարու հետ, կամ,



# ԴԱՍ ԼԴ

## ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԵՒ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱԳ

1. Ի՞նչ կ'անուանես հետևեալ նախադասու-  
թիւնները :

Գարունը եկաւ :

Բնութիւնը կը զարդարուի :

— Պարզ նախադասութիւն :

Ինչո՞ւ : . . . :

2. Հետևեալ մեծ նախադասութեանց մէջ  
քանի՞ պարզ նախադասութիւն կայ : . . . : Ի՞նչ  
միջոցով միացած են անոնք : . . . :

Ա. Գարունը կու գայ, եւ բնութիւնը կը զարդարուի :

Բ. Ես պիտի երթամ, քայց դուն դպրոցը պիտի մնաս :

Գ. Պիտի կարդամ, եթէ դուն մտիկ ընես :

Դ. Պիտի սպասեմ, մինչեւ որ անոնք ձեր տունը գան :

---

գէթ, յստակ գաղափար մը կրնայ չի կազմել անոնց վրայ: Ուստի ուսուցիչը  
ցոյց տալու է այս երկուքին կատարած միացումին տարբերութիւնը: Յե-  
տադրութիւնը կը կցէ անուն մը (կամ դերանուն մը) ուրիշ բառի մը  
(անունի մը, բայի մը կամ ածականի մը) հետ որակելով զանոնք, կամ,  
ուրիշ խօսքով, անոր գործն է ցոյց տալ յարաբերութիւնը քառերուն  
միջեւ զորս կցած է իրարու հետ: Իսկ շաղկապին գործն է, ընդհակա-  
ռակն, ցոյց տալ յարաբերութիւնը ոչ թէ բառերուն, այլ՝ նախադասու-  
թեանց միջեւ, զորս իրարու հետ կը միացնէ: Ու եթէ միացնէ բառեր  
(ինչպէս՝ յետադրութիւնը կ'ընէ), անոնք ամէնն ալ մի եւ նոյն տեսակէն  
կ'ըլլան եւ նոյն կերպով կը գործածուին նախադասութեան մէջ, այս-  
ինքն՝ կապուած բառերը ամէնն ալ նոյն պաշտօնը կը կատարեն, ինչպէս  
որ տեսնուեցաւ վերեւ տրուած բոլոր օրինակներուն մէջ:



Գիտելիք. — Այն նախադասութիւնները, որ  
իրարմէ անկախ պարզ նախադասութիւններէ կը  
կազմուին, կը կոչուին բաղադրեալ նախադա-  
սութիւն կամ պարբերութիւն, և զայն կազմող  
պարզ նախադասութիւնները կը կոչուին բացար-  
ձակ նախադասութիւն :

3. Ի՞նչ կը կոչուին վերը դրուած առաջին և  
երկրորդ երկայն նախադասութիւնները :

— Բաղադրեալ նախադասութիւն կամ պար-  
բերութիւն :

4. Որո՞նք են զանոնք կազմող բացարձակ  
նախադասութիւնները : . . . :

Գիտողութիւն. — Եթէ յիշեալ նախադասու-  
թեանց շաղկապները վերցնենք, առանձին պարզ  
նախադասութիւններ կ'ունենանք : Զոր օրինակ .

Գարունը կու գայ :

Բնութիւնը կը զարդարուի :

5. Երկրորդ բաղադրեալ նախադասութիւնը  
նոյն կերպով ուրոյն նախադասութիւններու փո-  
խէ : . . . :

6. Կրնա՞ս նոյն կերպով առանձին նախադա-  
սութիւններու փոխել երրորդ և չորրորդ մեծ նա-  
խադասութիւնները :

— Այ :

Փորձէ : . . . :



Գիտելիք. — Այն պարբերութիւնները, որ կը կազմուին բացարձակ նախադասութեանէ և ուրիշ մէկ կամ աւելի նախադասութիւններէ, որ կախում ունին անկէ, կը կոչուին իսառն պարբերութիւն, և նոյն նախադասութիւնները կը կոչուին ստորադաս նախադասութիւն :

7. Ի՞նչ կը կոչուին վերը դրուած երրորդ և չորրորդ երկայն նախադասութիւնները : . . . : Ուրո՞նք են անոնց մէջ բացարձակ և ստորադաս նախադասութիւնները : . . . :

8. Ո՞ր շաղկապներով միացած են անոնք : . . . :

9. Խառն պարբերութիւնը կազմող մասերը, բացարձակ և ստորադաս նախադասութիւնները, իրարմէ բաժնուելով առանձին նախադասութիւններ կրնան ըլլալ :

— Այ :

Փորձէ : . . . :

Գիտելիք. — Այն շաղկապները, որոնց միջոցով թէ նախադասութեան մը մէջ մի և նոյն կերպով գործածուած բառերը իրարու կը կապուին և թէ պարբերութիւնը կը կազմուի, կ'ըսուին համադասական շաղկապ. քանզի անոնք հաւասար աստիճանի կամ դասի (այսինքն՝ միայն բացարձակ) նախադասութիւններ կը միացնեն :

Իսկ այն շաղկապները, որոնց միջոցով խառն պարբերութիւնները կը կազմուին, կը կոչուին



ստորադասական շաղկապ . քանզի անոնք բացարձակ և ստորադաս նախադասութիւնները միանգամայն իրարու հետ կը միացնեն :

10. Ի՞նչ է համադասական շաղկապ :

— Համադասական շաղկապն է այն՝ որ նոյն դասի կամ հաւասար աստիճանի նախադասութիւնները եւ բառերը իրարու կը կապէ :

11. Ի՞նչ է ստորադասական շաղկապ :

— Ստորադասական շաղկապն է այն՝ որ ստորադաս նախադասութիւնը կը կապէ բացարձակ նախադասութեան մը հետ :

Ծանօթութիւն. — Գլխաւոր շաղկապներն են :

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ

Եւ , ու , կամ

Բայց , այլ

Ուսի , ուրեւն , եւ այլն

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Եթե , թե որ

Թեպէս , թեւ

Եթե ոչ , ապա թե ոչ

Որ , որպէս զի , եւ այլն

Հրահանգ 21

Ա. Հետեւեալ մեծ նախադասութեանց ո՞րը բաղադրեալ և ո՞րը խառն է : Ըսէ նաև թե ի՞նչ տեսակ շաղկապներ են գտնուող միացնողները :

1. Խաղը ոչ միայն զուարճալի է , այլ եւ շատ օգտակար է :
2. Վաղը հանդէսի պիտի երթամ , եթէ արգելք մը չի պատահի :
3. Ենովք թէեւ դպրոց գնաց , բայց տակաւին կը խաղայ :
4. Պէտք է հանդարտ կենաս , եթէ ոչ վարժապետը կը պատժէ :
5. Անիկա կը



խնդար, երբոր ես կ'երգէի: 6. Շուտով տուն գնա, որպէս զի չի հիւանդանաս: 7. Չեմ կրնար պատմել թէ ո՛րչափ ազդուեցայ իր քաղցր ձայնէն: 8. Աշակերտները վերնատան մէջ սպասեցին, մինչեւ որ Հոգին եկաւ: 9. Քրիստոս մեռաւ ու յարութիւն առաւ, որպէս զի մարդիկ փրկուին:

Բ. Հետեւեալ կետերուն տեղ յարմար շաղկապներ դիր, և ըստ թե անոնք համադասական են թե ստորադասական:

1. Ամպերը ցրուեցան . . . արեգակը ծագեցաւ: 2. Հիւանդը պիտի առողջանար . . . խրատիս մտիկ չըրաւ:
3. Ես իմացուցի իրեն . . . խանութս ստակ չունիմ: 4. Չեմ կրնար հաւատալ քրոջս . . . շատ անգամ ստած է:
5. . . . այդ ուսանողը յարատեւող է . . . պիտի լրացնէ իր ընթացքը:

---

ԳԼՈՒԽ Ը

## ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

---

### ԴԱՍ ԼԵ

ԻՍԿԱԿԱՆ ԵՒ ՊԾՏԱՀԱԿԱՆ ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ է միջարկութիւն: . . . :

Գիտելիք. — Միջարկութիւնը չէզոք բառ է, քանզի խօսքի կազմութեան մէջ ուղղակի գործ մը չունի:



2. Ի՞նչ զգացում կը յայտնեն միջարկութիւնները : . . . :

Պիտելիք. — Միջարկութիւնները զանազան զգացումներ կը յայտնեն, որոնց իւրաքանչիւրին առանձին անուն տալ աւելորդ է :

Սակայն անոնք կրնան բաժնուիլ երկու մասերու, իսկական և պասսահական : Իսկական կամ բուն միջարկութիւն են անոնք որ ի բնէ միջարկութիւն են : Ինչպէս . ո՛հ, ա՛հ, և այլն : Իսկ պատահական են անոնք որ թէև միջարկութիւն չեն, բայց իբր միջարկութիւն կրնան գործածուիլ : Ինչպէս . էր՛- , է՛նչ, է՛- , կեցցե՛ս, աչ՛նի՛- , և այլն :

3. Ի՞նչ է իսկական կամ բուն միջարկութիւն :

— Իսկական կամ բուն միջարկութիւնն է այն՝ որ միայն իբր միջարկութիւն կը գործածուի :

4. Ի՞նչ է պատահական միջարկութիւն :

— Պասսահական միջարկութիւնն են ուրիշ մասունք բանիներ, որ իբր միջարկութիւն կը գործածուին :



# ԴԱՍ ԼԶ

## ՀԱՆԴԻՍ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆԵՐՈՒ

- |                 |  |   |
|-----------------|--|---|
| 1. ԱՆՈՒՆ        | { <ol style="list-style-type: none"> <li>1. ՅԱՏՈՒԿ</li> <li>2. ՀԱՍԱՐԱԿ</li> <li>3. ՎԵՐԱՑԵԱԼ</li> </ol>   |   |
| 2. ԴԵՐԱՆՈՒՆ     | { <ol style="list-style-type: none"> <li>1. ԱՆՁՆԱԿԱՆ</li> <li>2. ՑՈՒՑԱԿԱՆ</li> <li>3. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ</li> <li>4. ՀԱՐՅԱԿԱՆ</li> <li>5. ԱՆՈՐՈՇ</li> </ol> |   |
| 3. ԲԱՅ          | { <ol style="list-style-type: none"> <li>1. ԷԱԿԱՆ</li> <li>2. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ</li> <li>3. ԶԷՋՈՔ</li> <li>4. ԿՐԱԻՈՐԱԿԱՆ</li> </ol>                        |   |
| 4. ՄԱԿԲԱՅ       | { <ol style="list-style-type: none"> <li>1. ԻՍԿԱԿԱՆ</li> <li>2. ԱԾԱԿԱՆ</li> <li>3. ՇԱՂԿԱՊԱԿԱՆ</li> </ol>   |   |
| 5. ԱԾԱԿԱՆ       | { <ol style="list-style-type: none"> <li>1. ՈՐԱԿԱԿԱՆ</li> <li>2. ԹՈՒԱԿԱՆ</li> <li>3. ԴԵՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ</li> <li>4. ՅՕԴ</li> </ol>                        | } <ul style="list-style-type: none"> <li>Բացարձակ</li> <li>Դասական</li> <li>Սացական</li> <li>Յուզական</li> <li>Հարցական</li> <li>Յարաբերական</li> <li>Անորոշ</li> <li>Որոշիչ</li> <li>Անորոշ</li> </ul> |
| 6. ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ |  |   |
| 7. ՇԱՂԿԱՊ       | { <ol style="list-style-type: none"> <li>1. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ</li> <li>2. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ</li> </ol>  |   |
| 8. ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ | { <ol style="list-style-type: none"> <li>1. ԻՍԿԱԿԱՆ</li> <li>2. ՊԱՏԱՀԱԿԱՆ</li> </ol>   |   |



## ԳԱՍ ԼԷ

ՀԱՆԴԷՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՆՈՆՑ ՄԱՍԵՐՈՒՆ

1. Նախադասութիւնն է խորհուրդ մը որ բառերու միջոցով կ'արտայայտուի :

2. Նախադասութեան մը գլխաւոր մասերն են .

Ենթական և ստորոգելին :

Ենթական նախադասութեան այն մասն է , որուն վրայ բան մը կ'ըսուի :

Ստորոգելին է նախադասութեան այն մասը , որ բան մը կ'ըսէ ենթակային վրայ :

3. Լրացուցիչն է բառ մը (կամ բառեր) , որ ենթակային կամ ստորոգելին վրայ կ'աւելնայ՝ անոր իմաստը լրացնելու համար :

4. Պարզ ենթական է այն , որ լրացուցիչ չունի :

Կրակը կը վառի :

5. Բաղադրեալ (կամ շրացեալ) ենթական է պարզ ենթական՝ իր լրացուցիչներովը :

Չոր փայտը վառեցի :

6. Պարզ ստորոգելին է բայը :

Չոր փայտը փառեցի :



7. Բաղադրեալ (կամ շրացեալ) ստորոգելին  
է պարզ ստորոգելին՝ իր լրացուցիչներովը :

Չոր փայտը սաստիկ վառեցի :

8. Պարզ ենթակայի մը լրացուցիչն է .

Ա. Ածականը :

Պայծառ արեւը կը շողայ :

Բ. Յողոճածոյ շրացուցիչը :

Ծառին վրայի թռչունը ինկաւ :

9. Պարզ ստորոգելին լրացուցիչն է .

Մակբայը :

Պետրոս դառնապէս լացաւ :

Ներգործական բային յատուկ լրացուցիչն է .

Առարկան :

Քոլումպոս Ամերիկան գտաւ :

Էական բային լրացուցիչն է .

Ա. Ստորոգական ածականը :

Ոսկին դեղին է :

Բ. Ստորոգական անունը :

Ոսկին մե՛տաղ մըն է :

10. Պարզ նախադասութիւնն է այն՝ որ մէկ  
ենթակայ և մէկ ստորոգելի ունի :

11. Պարբերութիւն կամ բաղադրեալ նա-



խաղասուրբիւն կ'ըսուի այն՝ որ իրարմէ անկախ  
պարզ նախադասութիւններէ կը կազմուի :

12. Խառն պարբերութիւնն է այն՝ որ կը  
կազմուի պարզ նախադասութենէ և մէկ կամ  
աւելի նախադասութիւններէ , որ կախում ունին  
բացարձակ նախադասութենէն :

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Ե Ի Ա Ն Ո Ն Ց Մ Ա Ս Ե Ր Ո Ւ Ն

- |                  |   |   |
|------------------|---|---|
| 1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻԻՆ | { | 1. Պարզ<br>2. Բացարձակ<br>3. Ստորադաս   |
| 2. ՊԱՐԲԵՐՈՒԹԻԻՆ  | { | 1. Բաղադրեալ նախադասութիւն<br>2. Խառն նախադասութիւն   |
| 3. ԵՆԹԱԿԱՑ       | { | 1. Պարզ<br>2. Բաղադրեալ   |
| 4. ՍՏՈՐՈԳԵԼԻ     | { | 1. Պարզ<br>2. Բաղադրեալ   |
| 5. ԼՐԱՑՈՒՑԻԶ     | { | 1. Ածական. — Անունին՝ ենթակայի եւ ստորոգելի մասին մէջ<br>2. Մակբայ. — Ստորոգելին<br>3. Յօդուածոյ. — Ենթակայի եւ ստորոգելի մասին մէջ<br>4. Առարկայ. — Ներգործական ստորոգելին<br>5. Ստորոգական անուն } Էական բայ<br>6. Ստորոգական ածական } ստորոգելին |



## ԴԱՍ ԼԸ

### ՀԱՆԳԷՍ ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒ

Ա.

1. Գրէ պարզ նախադասութիւն մը, որուն երկու մասերն ալ, ենթական և ստորոգելին, մէյ-մէկ ածական քաղցուցիչներ պարունակեն :

2. Գրէ նախադասութիւն մը, որուն ենթական յօդուածոյ քաղցուցիչով մը ընդլայնուած ըլլայ :

3. Գրէ նախադասութիւն մը, որուն ստորոգելին պարունակէ յօդուածոյ քաղցուցիչ մը, ածականի կամ մակբայի իմաստով :

4. Գրէ նախադասութիւն մը, որուն ստորոգելին երկու մակբայով քաղած ըլլայ :

5. Գրէ նախադասութիւն մը, որուն ստորոգելին առարկայով մը քաղած ըլլայ :

6. Գրէ երկու նախադասութիւններ, որոնց մէկուն ստորոգելին ստորոգական ածականով և միւսինը՝ ստորոգական անունով քաղած ըլլայ :

7. Գրէ նախադասութիւն մը, որ պարունակէ կրաւորական բայ մը իր քաղցուցիչով :

8. Նոյն նախադասութեան ձևը փոխէ :



Բ

Համառօտաբար գրե ինչ որ գիտես.

- |                     |      |
|---------------------|------|
| 1. Անուններուն      | վրայ |
| 2. Դերանուններուն   | »    |
| 3. Բայերուն         | »    |
| 4. Մակբայներուն     | »    |
| 5. Ածականներուն     | »    |
| 6. Յետադրութեանց    | »    |
| 7. Շաղկապներուն     | »    |
| 8. Միջարկութեանց    | »    |
| 9. Նախադասութեանց   | »    |
| 10. Լրացուցիչներուն | »    |

Գ

(Ուսուցիչը պարզ և համառօտ պատմութիւն մը ընէ, կամ գրքէ մը կարդայ ուսանողներուն, և պահանջէ որ գայն գրի առնեն, որքան որ կրնան յիշել, ու ներկայացնեն իրեն դասի ժամանակ):

ԴԱՍ ԼԹ

ՀԱՆԴԷՍ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Ա. Նկարագրէ շէնք մը, գոր օրինակ, տուն մը, եկեղեցի մը, և այլն, պատասխանելով հետևեալ հարցումներուն:

1. Ի՞նչ է : 2. Ի՞նչ բանի կը գործածուի : 3. Որո՞նք են անոր գլխաւոր մասերը : 4. Ի՞նչ բաներով կը շինուի : 5. Որո՞նք կը շինեն :

Օրինակ. — Տուն մը :



1. Տուներ շէնք մըն է :

2. Անիկա բնակութեան համար կը գործածուի :

3. Անոր գլխաւոր մասերն են պատերը , տախտակամածները , ձեղունները , սենեակները , պատուհանները , սանդուխները , եւ այլն :

4. Անիկա կը շինուի փայտով , երկաթով , քարով կամ աղիւսով եւ կիրով :

5. Զանիկա կը շինեն բանւորները՝ ճարտարապետներու առաջնորդութեամբ :

Նոյնը միացուցուած .

Տուներ շէնք մըն է , որ կը գործածուի բնակութեան համար , եւ կը շինուի փայտով , եւ այլն , ճարտարապետներու եւ գործաւորներու ձեռքով : Անոր գլխաւոր մասերն են պատերը , եւ այլն :

Բ. Կրնաս բան մը պատմել (գրաւոր) .

Այժի մը վրայ կամ թռչունի մը վրայ , կամ ո եւ է բանի մը վրայ զոր կը յիշես :

Գ. Համառօտ բաներ գրե հետևեալ իրերուն վրայ :

### Մետադներ

Ուրուագիծ . — Ո՞ւր կը գտնուի , ի՞նչպէս կը հանուի , յատկութիւնները , գործածութիւնը , եւ այլն :

- |          |          |          |
|----------|----------|----------|
| 1. Երկաթ | 3. Արծաթ | 5. Կապար |
| 2. Ոսկի  | 4. Պղինձ | 6. Անագ  |

### Ծառեր

Ուրուագիծ . — Յատկութիւնները , պտուղները , եւ այլն :

- |             |             |            |
|-------------|-------------|------------|
| 1. Խնձորենի | 3. Նոճի     | 5. Զիթենի  |
| 2. Որթ      | 4. Արմաւենի | 6. Կաղամախ |



Գ. Հետևեալ հարցումներուն պատասխանե (գրաւոր):

1. { Ի՞նչ կը պատահի շաքարին , եթէ զայն ձգես ջուրին մէջ :  
Գիտե՞ս ուրիշ բան մը , շաքարէն զատ , որ անուշ ըլլայ :  
Ի՞նչ կ'ըլլայ շաքարը , եթէ զայն ձգես թէյին մէջ :  
Բան մը կը պատահի՞ թէյին , եթէ շաքարը անոր մէջ ձգես :

2. { Պտուղի ծառերը ե՞րբ կը ծաղկին :  
Պտուղները ե՞րբ կը հասնին ընդհանրապէս :  
Տերեւները ե՞րբ կը թափին ծառերէն :  
Գիտե՞ս ծառեր որ բոլոր տարին կը մնան կանանչ :

Ե. Հետևեալ պատմութիւնը մաս առ մաս կարդա , և իւրաքանչիւրին բառագնութիւնը կատարե ու վերլուծե զայն , բերանացի և գրաւոր :

( Պ Ա Տ Մ Ո Ւ Յ Ի Ի Ն )

### ՇՈՒՇԱՆ ԲԱՆՏ-ՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՁ

Պատուաւոր ընտանիք մը որդեգրեց Օննիկ անուն պզտիկ շար տղայ մը : Իրենց փոքրիկ աղջիկը , Շուշան , շատ բարեսրտութիւն կը ցուցնէր անոր : Սակայն Օննիկ գէշ կը վարուէր իրեն հետ , եւ օր մը բարկութեան վայրկեանին մեծապէս վնասեց անոր : Ընտանիքը զգացին թէ անոր հետ խստութեամբ վարուելու էին եւ պատժելու էին զանիկա :

Տան մէջ սենեակ մը կար , որուն պատուհանները երկաթէ ձողեր ունենալուն համար կը կոչուէր բանտ-սենեակ : Քիչ կարասի կը պարունակէր , եւ գլխաւորա-



բար իբրեւ մառան կը գործածուէր : Օննիկի վարքը անոր  
առջեւ լաւ մը պարզելէ ետեւ , որոշեցին հոն դնել զա-  
նիկա : Օննիկ «հոգս չէ» կ'ըսէր : Անիկա բանտարկ-  
ուեցաւ օրուան մնացեալ ժամերը , եւ բոլոր գիշերը :  
Եւ թերեւս մէկը չի կար որ Շուշանի շափ ցաւէր իրեն  
համար : «Մայրիկ,» ըսաւ անիկա , «չեմ կրնար անկո-  
ղին մտնել : Չեմ կրնար շարունակ չի խորհիլ խեղճ  
Օննիկի վրայով , որ առանձին է , լոյս չունի , եւ բան մը  
չունի» Ու իր փոքրիկ շրթուները դողդղաց : Քիչ մնաց  
պիտի լար :

Երկու օր անցաւ , եւ Օննիկ իր յանցանքին համար  
երբէք ցաւելու նշան չէր ցուցներ : Շատ շատ «հոգս չէ»  
կ'ըսէր : «Մայրիկ,» ըսաւ Շուշան , «կրնամ երթալ եւ  
Օննիկի տեղը բանտարկուիլ , որ Օննիկ վար գայ եւ  
տեսնէ թէ ի՞նչ հաճելի է բանտէն դուրսը : Իսկ հոն ա-  
րեւ չի կայ , ոչ ալ ուրիշ հաճելի բան կայ» Մայրիկը իր  
սիրելի զաւկին երեսը նայեցաւ , եւ ըսաւ . «Գնա , Շու-  
շան» Շուշան Օննիկի բանտին դուռը գնաց եւ , բանա-  
լով զայն , ըսաւ . «Խնդրեցի մայրիկէն որ դուն դուրս  
ելլես ու տեսնես թէ ի՞նչ հաճելի է դուրսը : Հոս շատ  
տխուր եւ առանձին է» Օննիկ վեր նայեցաւ եւ , Շու-  
շանի մօտենալով , «Խենթեցե՞ր ես , ի՞նչ ես եղեր,» ըսաւ :  
Սակայն եւ այնպէս կամաց կամաց քալելով դուրս ելաւ :  
Յետոյ Շուշանի մայրը եկաւ եւ անոր վրայ դուռը կըղ-  
պեց : «Թող Օննիկ իր ճաշը վարը ուտէ,» փափսաց  
Շուշան , «եւ ես պիտի ուտեմ իր ճաշը»

Երբ Շուշանի հայրը տուն եկաւ , իր կինը պատ-  
մեց պատահածը : Օննիկ սեղան նստաւ , Շուշանի դա-  
տարկ ակտուն դիմացը : «Շուշանի հացը եւ ջուրը տար,»  
ըսաւ մայրը Օննիկի , ափսէն անոր տալով : Օննիկ ա-  
ռաւ զայն ու գնաց , շատ լուրջ եւ քիչ շատ զգաստ կեր-



պարանքով : Շուշանի փափաքին համեմատ Օննիկ վարը  
մնաց մինչեւ իրիկուան ճաշի ժամանակ :

«Շուշան բոլոր գիշերը հո՞ն պիտի կենայ, իմ տեղս,»  
հարցուց Օննիկ պառկելու ժամանակները : «Այո,» ըսաւ  
Շուշանի մայրը :

Օննիկի աչքերը սկսան արցունքով լեցուիլ : Վեր  
վազեց եւ, բանտ-սենեակը երթալով, «Շուշան,» պոռաց,  
«քեզի չափ բարի աղջիկ չեմ տեսած : Շուշան, երբէք,  
երբէք ա՛լ քեզի հետ գէշ պիտի չի վարուիմ : Երբէք  
քեզ պիտի չի խածնեմ, կամ ճանկութեմ : Ոչ, երբէք :  
Շատ կը ցաւիմ իմ վարմունքիս համար : Իրաւ որ շատ  
կը ցաւիմ : Պիտի ջանամ բարի տղայ մը ըլլալ : Այո, պիտի  
ջանամ : Շուշան, ի՞նչ է որ ինծի հետ այսքան բարե-  
սրտութեամբ վարուիլ կու տայ քեզի :» Եւ խեղճ Օննիկ  
դառնապէս լացաւ :

Օննիկ բոլորովին զգաստացաւ, եւ այդ ժամէն սկսաւ  
իրօք բարեկարգել ինքզինք :

---

### Օ Ր Ի Ն Ա Կ Ն ԵՐ

#### ԲԵՐԱՆԱՑԻ ԵՒ ԳՐԱԻՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆՑ

---

##### ԲԵՐԱՆԱՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Օրինակ. — Պատուաւոր ընտանիք մը որդեգրեց  
Օննիկ անուն չար տղայ մը :

1. Ընտանիք. — Պարզ եւրոպայ  
 Պատուաւոր. — Ածական յրացուցիչ եւրոպայի  
 Մը. — Անորոշ յօդ  
 Պատուաւոր ընտանիք մը. — Բաղադրեալ եւրոպայ
2. Որդեգրեց. — Պարզ ստորոգելի  
 Տղայ մը. — Առարկայ ստորոգելի  
 Չար. — Ածական յրացուցիչ տղային  
 Օննիկ անուն. — Յօդուածոյ յրացուցիչ ստորոգելի  
 Օննիկ անուն չար տղայ մը. — Բաղադրեալ ստորոգելի



ԳՐԱԻՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Կանոն. — Մէկ գիծ քաշէ հասարակ լրացուցիչներու ներքեւ, և երկերկու գիծ՝ առարկաներու և ստորագական ածականներու կամ անուններու տակ: Ենթական և ստորագելին իրենց լրացուցիչներով բաժնէ հորիզոնական գծով մը:

Օրինակ Ա.

Պատուաւոր ընտանիք մը | որդեգրեց Օննիկ անուն  
չար տղայ մը:

Օրինակ Բ.

Ի՞նչ հաճելի է | բանտէն դուրսը:

Օրինակ Գ.

Երբ Շուշանի հայրը | տուն եկաւ, իր կինը | պատ-  
մեց պատահած ր:

ԲԵՐԱՆԱՅԻ ԲԱՌԱԶՆԵՆՈՒԹԻՒՆ

Օրինակ. — Պատուաւոր ընտանիք մը, եւ այլն:

Պատուաւոր. — Որակական ածական, աւոր մասնիկով կազմուած

Ընտանիք. — Հասարակ անուն

Մը. — Անորոշ յօդ (ածական)

Որդեգրեց. — Ներգործական քայ. արմատ՝ որդեգիր

Օննիկ. — Յատուկ անուն, եւ այլն



















## ԴԱՍ Խ

### Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1. Քանի՞ տեսակ անուն կայ : Ի՞նչ է մասնիկ : Մասնիկը ինքնին նշանակութիւն ունի՞ : Անուն մը կամ ածական մը ի՞նչպէս վերացեալ անունի կը փոխես : Ի՞նչպէս կ'իմացուի վերացեալ անունը . զգայարանքով թէ վրան խորհելով : Ի՞նչ կը ցուցնեն ծանուցում , դիտողութիւն , եւ այլն , բառերը : Ի՞նչ տեսակ անուն կը կոչուին անոնք : (Դաս Ա.—Դ) :

2. Ի՞նչ է դերանուն : Քանի՞ տեսակ են : Որո՞նք են : Ի՞նչ է դէմք : Ո՞րն է անձնական դերանունը : Ո՞րն է ցուցականը , եւ ո՞ր դէմքին կը վերաբերի : Ի՞նչ է յարաբերականը : Դէմք կը ցուցնէ՞ : Ո՞րն է յարաբերեալը : Որո՞նք են հարցական եւ անորոշ դերանունները : (Դաս Է — Թ , ԺԱ , ԺԲ) :

3. Ի՞նչ է բայ : Քանի՞ տեսակ բայ կայ : Ի՞նչ է էական բայը , ներգործակա՞նը , չէզո՞քը , կրաւորակա՞նը : Ենթակայ մը եւ էական բայը կրնա՞ն նախադասութիւն կազմել : Ի՞նչ են ստորոգական ածական կամ անուն : Ներգործականին պահանջած լրացուցիչը ի՞նչ կը կոչուի : Չէզոք բայ մը եւ ենթակայ մը կրնա՞ն նախադասութիւն մը կազմել : Ի՞նչպէս կը փոխես ներգործական մը կրաւորական ձեւի : Բայերը ի՞նչպէս կը կազմուին : (Դաս ԺԴ — ԺԷ) :

4. Քանի՞ տեսակ մակբայ կայ : Որո՞նք են : Մակբայները ի՞նչպէս մը կազմուին : (Դաս ԻԱ , ԻԲ) :

5. Քանի՞ տեսակ ածական կայ : Որո՞նք են : Քանի՞ դերանուանական ածականներ կան : Ե՞րբ դերանուն



են . ե՞րբ՝ ածական : Ի՞նչ է յօդ : Քանի՞ տեսակ է : Ի՞նչ-  
պէս կը կազմուին ածականները : Ի՞նչ է բարդ բառ :  
Ի՞նչ է ածանցեալ բառ : Ո՞րն է արմատ բառը : (Դաս  
ԻԵ—ԻԹ) :

6. Ի՞նչ է յետադրութիւն : Նախադասութեան ո՞ր  
մասին լրացուցիչ կ'ըլլայ : (Դաս ԼԱ) :

7. Ի՞նչ է շաղկապ : Քանի՞ տեսակ շաղկապ կայ :  
Ի՞նչ է շաղկապին բնութիւնը : Ի՞նչ է շաղկապին սահ-  
մանը : (Դաս ԼԲ—ԼԴ) :

8. Ի՞նչ է միջարկութիւն : Քանի՞ տեսակ միջար-  
կութիւն կայ : (Դաս ԼԵ) :

9. Կարգաւ ըսէ անուններու տեսակները , դե-  
րանուններուն , բային , մակբային , ածականին , շաղ-  
կապին եւ միջարկութեան տեսակները կամ ստորաբա-  
ժանումները : (Դաս ԼԶ) :

10. Ի՞նչ է նախադասութիւն : Նախադասութեան  
գլխաւոր մասերը որո՞նք են : Ո՞րն է ենթական : Ո՞րն է  
ստորոգելին : Ի՞նչ է լրացուցիչ : Որո՞նք են պարզ են-  
թակայ եւ ստորոգելի , բաղադրեալ ենթակայ եւ ստո-  
րոգելի : Որո՞նք են պարզ ենթակային լրացուցիչները :  
Որո՞նք են ստորոգելիինը , ընդհանրապէս : (Դաս ԼԵ) :

11. Հսէ կարգաւ թէ քանի՞ տեսակ նախադա-  
սութիւն կայ , եւ ի՞նչ են անունները : Քանի՞ տեսակ են-  
թակայ , քանի՞ տեսակ ստորոգելի , եւ ի՞նչ են անուն-  
ները : Կարգաւ համրէ լրացուցիչները : (Դաս ԼԵ) :

12. Ի՞նչ է պարզ նախադասութիւն : Ո՞րն է բա-  
ղադրեալ նախադասութիւնը կամ պարբերութիւնը , եւ  
ո՞րն է իսառն նախադասութիւնը : (Դաս ԼԵ) :

Վ Ե Ր Զ

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ









ԳԼՈՒԽ Ա — ԱՆՈՒՆ

ԴԱՍ

- Ա. Տատուկ անուն
- Բ. Հասարակ անուն
- Գ. Շարադրութիւն
- Դ. Հասարակ անուններու կազմութիւնը — Վերացեայ անուն
- Ե. Հանդէս անուններու
- Զ. Շարադրութիւն

ԳԼՈՒԽ Բ — ԴԵՐԱՆՈՒՆ

- Է. Անձնական դերանուն
- Ը. Տուցական դերանուն
- Թ. Տարաբերական դերանուն
- Ժ. Շարադրութիւն
- ԻԱ. Հարցական դերանուն
- ԻԲ. Անորոշ դերանուն
- ԻԳ. Հանդէս դերանուններու

ԳԼՈՒԽ Գ — ԲԱՅ

- ԻԴ. Էական բայ
- ԻԵ. Ներգործական և չեզոք բայ
- ԻԶ. Կրաւորական բայ
- ԻԷ. Բայերու կազմութիւնը
- ԻԸ. Հանդէս բայերու
- ԻԹ. Շարադրութիւն
- ԻՐ. Օրինակ բառազննութեան և վերլուծութեան



## ԳԼՈՒԽ Դ — ՄԱԿԲԱՅ

### ԴԱՍ

- ԴԱ Մակբային սահմանը
- ԴԲ Ածական և շաղկապական մակբայ
- ԴԳ Հանդես մակբայներու
- ԴԴ Շարադրութիւն

## ԳԼՈՒԽ Ե — ԱԾԱԿԱՆ

- ԵԵ Որակական, թուական և դերանունական ածականներ
- ԵԶ Յօդեր
- ԵԷ Հանդես ածականներու
- ԵԸ Ածանցեալ բառ. — Մակբայի կազմութիւնը
- ԵԹ Ածականներու կազմութիւնը — Ածանցեալ և բարդ բառեր
- Է Շարադրութիւն

## ԳԼՈՒԽ Զ — ՅԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

- ԶԱ Յետադրութիւն

## ԳԼՈՒԽ Է — ՇԱՂԿԱՊ

- ԷԲ Շաղկապներուն բնութիւնը
- ԷԳ Շաղկապին սահմանը
- ԷԴ Համադասական և ստորադասական շաղկապ

## ԳԼՈՒԽ Ը — ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

- ԸԵ Իսկական և պատահական միջարկութիւն
- ԸԶ Հանդես մասունք բանիներու
- ԸԷ Հանդես նախադասութեանց և անոնց մասերուն
- ԸԸ Հանդես հրահանգներու
- ԸԹ Հանդես շարադրութեանց
- Խ Քննութիւն





İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1015\***

255.07.02.01.06.00/



ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ

Թիւ 20, Չափնախնայար Եօզուշու, Կ. Պոլիս



ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Դահեկան

Մասունք Բանի Կամ Բառեր . . . . . 2

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ասորաբաժանում Բառերու . . . . . 2 1/2

ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ

Չեափոխութիւն Բառերու . . . . . 4



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Պ. ՊԱԼԵՆՑ

معارف عمومية نظارت جلیله سنك ۲۵ ربع الاخر ۳۱۶ و ۳۱ آغستوس  
۳۱۴ تاریخلی و ۷۱ نومرولی و خصتنامه سیله نشر اولمشدر